

ԱՆԱՀԻՏ  
ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԵՐԵՆԻ

ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ





*Նվիրում եմ ծնողներիս*



The National Academy of Sciences of the Republic of Armenia  
H.Acharian Institute of Language

Abrahamian Anahit

**THE WORD-NAMES OF AGRICULTURAL IMPLEMENTS  
IN THE ARMENIAN DIALECTS**

Publishing house "Gitutyun" of NAS RA  
Yerevan – 2013

\*\*\*

Национальная академия наук Республики Армения  
Институт языка им. Р. Ачаряна

Абрамян Анаит

**НАИМЕНОВАНИЯ ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКИХ ОРУДИЙ  
В ДИАЛЕКТАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА**

Издательство "Гитутюн" НАН РА  
Ереван – 2013

ՆՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

79983.3

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ  
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐՈՒՄ



ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԴ- 809.198.1

ԳՄԴ- 81.2Հ

Ա 161

Գիրքը հրատարակության է երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի  
գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝  
բանաս. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա.Ե.Սարգսյան

Գրախոսներ՝  
բանաս. գիտ. դոկտոր Ս.Ա.Հայրապետյան  
բանաս. գիտ. թեկնածու Ա.Յու.Սարգսյան  
պատմ. գիտ. թեկնածու Ս.Գ.Հոբոսյան

Աբրահամյան Ա.Ա.

Ա 161

Երկրագործական գործիքների անվանումները հայերենի  
բարբառներում – Եր.: «Գիտություն» հրատ., 2013. – 333 էջ:

Աշխատանքը նվիրված է «Հայերենի բարբառագիտական  
ատլասի» նյութերի հավաքման ծրագրում «երկրագործություն»  
իմաստային (թեմատիկ) խմբում ընդգրկված գործիքանիշ 7 հաս-  
կացությունների բառանունների քննությանը: Հետազոտության ար-  
դյունքները կարող են օգտագործվել բարբառագիտական, բա-  
ցատրական և ստուգաբանական նոր բառարաններում, ինչպես  
նաև բուհերի բարբառագիտության, ազգագրության դասընթաց-  
ներում:

ՀՏԴ- 809.198.1

ԳՄԴ- 81.2Հ

ISBN 978-5-8080-1028-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայ բարբառների ուսումնասիրությունը սկիզբ է առնում XIX դ. 60-ական թթ. Ա. Այտընյանի և Բ. Պատկանյանի աշխատություններից, երբ գրական լեզվի ընդհանուր պատմության մեջ առանձին կարևորություն են ստանում տարածքային տարբերակների ավյալները, որոնք էլ խմբավորվում և բնութագրվում են արտալեզվական՝ աշխարհագրական, այլև լեզվական՝ հնչյունական, ձևաբանական և այլ հատկանիշներով: Նկատենք, որ Բ. Պատկանյանի բարբառագիտական աշխատությունները հայտնի էին եվրոպացի հայագետներին, Հ. Հյուբշմանը հորդորեց եվրոպայում ուսանող Հ. Աճառյանին և ուրիշների ըստ հնարավորին առանձին ուշադրության առարկա դարձնել հայերենի բարբառների ուսումնասիրությունը:

Հետագայում՝ 1890-ական թթ. վերջերին, Հ. Աճառյանը հայ բարբառները դասակարգեց ձևաբանական մեկ հիմնական հատկանիշի հիման վրա, և ըստ այդմ հիմք դրվեց հայ բարբառագիտության՝ իբրև առանձին գիտակարգի:

Ավելի ուշ եղան բարբառների ոչ միայն քանակային կողմին, այլև հնչյունական և քերականական կառուցվածքին վերաբերող լրացումներ և ճշգրտումներ, որոնցից առավել ուշադրության են արժանի Ա. Ղարիբյանի, է. Աղայանի, իսկ ավելի ուշ՝ Գ. Զահուկյանի աշխատանքները:

Բարբառների ուսումնասիրման համար շրջադարձային եղավ Գ. Զահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգումը, որին նվիրված էր հեղինակի «Հայ բարբառագիտության ներածություն» գիրքը (Երևան, 1972 թ.): Այն ենթադրում էր բարբառային նյութի հավաքչական աշխատանքի շարունա-

կում, ինչպես նաև եղած նյութի տեսական առանձին, առավել մանրամասն ուսումնասիրություն:

ՀՀ ԳԱՍ. Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագետների՝ տարիների հավաքչական աշխատանքի շնորհիվ այսօր ունենք եթե ոչ ամբողջական ու վերջնական, ապա բավարարչափով նյութ տարբեր բնույթի տեսական ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար: Եվ, իրոք, Գ. Ջահուկյանի հայ բարբառագիտության ներածությանն այսօր հաջորդում են առանձին աշխատանքներ՝ նվիրված բարբառների հնչյունաբանության, բառապաշարի իմաստային (թեմատիկ) խմբերի, ձևաբանական իրողությունների ուսումնասիրմանը, որն անպայման գնահատելի է:

Անահիտ Աբրահամյանի «Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում» աշխատանքը նվիրված է բարբառների բառապաշարի մի առանձին ոլորտի՝ երկրագործական («գյուղատնտեսական») հասկացություն նշանակող բառերի (տերմինների կամ տերմինային անվանումների) քննությանը՝ դրանց ոչ միայն արտահայտության և բովանդակության պլանների նկատառումով, այլև ծագման և գործառական կողմի տեսանկյունից:

Աշխատանքում քննվում են «գործիքանիշ 7 հասկացությունների բառանուններ (118 միավոր)», որոնցից միայն 87-ն է գրանցված հայերենի բարբառագիտական ատլասի նյութերում, իսկ մնացածը (թվով՝ 31) քաղված է «այլ աղբյուրներից (բառարաններ, բարբառագիտական և ազգագրական գրականություն)»: Ըստ այդմ նկատելի է, որ կատարված է նաև ինքնուրույն հավաքչական աշխատանք՝ ուսումնասիրության փաստական կողմը համալրելու, ըստ հնարավորին ամբողջացնելու նպատակով:

Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է «բազ» և «երկբերան բրիչ», երկրորդ գլխում՝ «արոր» և «փոցխ», իսկ երրորդ գլխում՝ «մանգաղ», «գերանդի» և «եղան» հասկացություն նշանակող անուններին և վերջիններիս տասնյակներից անցնող տարբերակներին, որոնք գործածական են եղել անցյա-

լուծմ, մեծ մասամբ շարունակում են այդպիսին լինել նաև մեր օրերում: Առաջին գլխում «Արոր բառանունը հայ մատենագրության մեջ և թարգմանություններում» վերնագրի տակ կատարվում է գրավոր աղբյուրների վկայությունների վրա հիմնված բավականին մանրակրկիտ մի վերլուծություն, որը միանգամայն ինքնուրույն աշխատանք է, որում վեր է հանվում գյուղատնտեսական այդ տերմինի բանասիրական, ավելի կոնկրետ՝ բնագրագիտական ամբողջական պատկերը, ուստի այն մեծապես դնահատելի է ոչ միայն մեր գրական լեզվի, այլև բարբառների պատմության համար:

Քննությունը կատարվում է բարբառագիտական ատլասի համար հավաքված փաստական նյութի լայն օգտագործմամբ, որը հաճախ, ինչպես նշեցինք, լրացվում է նոր տվյալներով: Հեղինակը հանդես է բերել ոչ միայն բարբառագետի, այլև բանասեր հետազոտողի գիտական և իմացական լավագույն պատրաստվածություն: Ուշադրության առարկա յուրաքանչյուր հարցի տեսական քննարկման և գնահատության, այս կամ այն վերլուծության հիմնավորման նպատակով բերվող օրինակները լիովին համոզիչ են: Առհասարակ ուսումնասիրության փաստական նյութը բավականին հարուստ է և միանգամայն վստահելի:

Բարբառային նյութն ուսումնասիրվում է լեզվաբանական և այլ բնագավառի գիտական գրականության մեջ նման հարցերում առաջ քաշված տեսակետների և մոտեցումների օգտագործմամբ, ընդ որում դրանց նկատմամբ ունեցած որոշակի վերաբերմունքով հանդերձ: Դա նկատելի է, օրինակ, համապատասխան բառերի (տերմինների) ծագման, այսինքն՝ բնիկ կամ փոխառյալ լինելու առումով եղած տեսակետներին անդրադառնալիս և դրանց գնահատության հարցում օբյեկտիվ վերաբերմունք ունենալու մեջ: Հեղինակը ցույց է տալիս նաև տարածաշրջանի մի շարք լեզուներում հայերենից կատարված փոխառությունները: Բառերի ստուգաբանության հարցում նա հիմնականում հետևում է Հ. Աճառյանի, Գ. Զահուկյանի տեսակետներին, սակայն մի շարք դեպքերում էլ կատարում է լրացումներ, հայտնում իր այս

կամ այն նկատառումը, նաև ստուգաբանում է որոշակի թվաքանակով անստույգ բառեր: Իսկ դա նշանակում է, որ Հեղինակը, քննության առնելով իմաստային (թեմատիկ) մեկ առանձին ոլորտ, առհասարակ իր ներդրումն է ունենում Հայերենի բարբառների տեսական ուսումնասիրության մեջ:

Աշխատանքը Հայերենի բարբառների իմաստային (թեմատիկ) մեկ առանձին խմբի մեջ մտնող համապատասխան միավորների տարածքային-վիճակագրական քննություն է՝ հիմնված ոչ միայն Հնչյունական, այլև բառային հատկանիշների վրա: Նրանում բերվում են նաև մեկուկես տասնյակից ավելի ցանկեր, որոնք գնահատելի մանրամասնությամբ, թե՛ մեծ և թե՛ փոքր բնակավայրերի մատնանշումով երևան են հանում այն ամենը, որն անհրաժեշտ է դիտվել ցույց տալու, թե երկրագործական ինչ գործիքներ են այդ բնակավայրերում գործածվելիս եղել, դրանք Հնչյունական-արտասանական ինչ տարբերություններ ունեն տվյալ տարածքի լեզվում (բարբառում): Վիճակագրական տվյալներ են բերվում նաև աշխատանքի բուն շարադրանքում և գրեթե ամեն անգամ, երբ քննարկվում է այս կամ այն տարածքում տվյալ բառային միավորի գործածական լինելը:

Ա. Աբրահամյանի սույն մենագրությունը գիտական պատշաճ մակարդակով գրված աշխատանք է, իր բնութթով՝ նորություն, նաև որոշակի ներդրում Հայերենի բարբառների տեսական ուսումնասիրության մեջ:

Վ. Գ. Համբարձումյան  
բանասիրական գիտությունների դոկտոր

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր շատ է կարևորվում յուրաքանչյուր լեզվի բարբառագիտական ատլասի կազմումը: XX դ. սկսած՝ հրատարակվել են ֆրանսերենի, գերմաներենի և եվրոպական այլ լեզուների բարբառագիտական ատլասներ<sup>1</sup>: XX դ. վերջին և XXI դ. սկզբին հրատարակվել են ռուսերենի<sup>2</sup>, բալկանյան լեզուների<sup>3</sup> և աշխարհի այլ լեզուների բարբառագիտական ատլասներ: Որոշ լեզուների, այդ թվում և հայերենի բարբառագիտական ատլասները դեռևս կազմման փուլում են: «Հայերենի բարբառագիտական ատլասի» (ՀԲԱ) ստեղծման գործում կարևոր տեղ ունեն նաև հայերենի բարբառներում գործածված երկրագործական գործիքանիշ հասկացությունների բառանունների ուսումնասիրությունը և դրա հիման վրա գործիքների անվանումների քարտեզների կազմումը:

<sup>1</sup> Տե՛ս Հ.Ղ.Մուրադյան, Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները. – Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), հ. 1, Երևան, 1982, էջ 9–16, Ա.Ծ.Սարգսյան, Լեզվաբանական աշխարհագրություն, Երևան, 2003, էջ 12–14:

<sup>2</sup> Տե՛ս Диалектологический атлас русского языка, вып. I: Фонетика, Москва, 1986, вып. II: Морфология, Москва, 1989, вып. III, ч. 1: Лексика, Москва, 1997, вып. III, ч. 2: Синтаксис. Лексика, Москва, 2004:

<sup>3</sup> Տե՛ս Малый диалектологический атлас балканских языков (Пробный выпуск), München, 2003, Малый диалектологический атлас балканских языков (Серия грамматическая), т. 1, Категории имени существительного, München, 2005, Малый диалектологический атлас балканских языков (Серия лексическая), т. 1, Лексика духовной культуры, München, 2005, т. 2, Человек. Семья, München, 2006, т. 3, Животноводство, Санкт-Петербург, München, 2009, т. 4, Ландшафт, Санкт-Петербург, München, 2010, т. 5, Метеорология: погода, атмосферные явления, осадки, Санкт-Петербург, München, 2012, т. 6, Полеводство, огородничество, Санкт-Петербург, München, 2013:

Պետք է նշել, որ շատ լեզուներում երկրագործական բանապաշարի քննությունը վերջին տարիներին ձեռք է բերել հույժ կարևոր նշանակություն: Այդ մասին է վկայում թելուզև այն փաստը, որ նշված շրջանում տարբեր երկրներում այդ թեմայով պաշտպանվել են դոկտորական<sup>4</sup> և թեկնածուական<sup>5</sup> բազմաթիվատենախոսություններ:

Հայերենի բարբառներում գործածված երկրագործական գործիքների անվանումների առանձին ուսումնասիրություն չի կատարվել: Առկա է միայն թեմային այս կամ այն չափով առնչվող զրականություն, որը կարելի է բաժանել երկու խմբի.

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, հետևյալ առենախոսությունների սեղմագրերը. **М.Пенжнев**, Историческое развитие и современная структура сельскохозяйственной земледельческой терминологии в туркменском языке, Ашгабад, 1983, **М.М.Султыгова**, Сельскохозяйственная лексика ингушского языка. Махачкала, 2012, **А.В.Грошева**, Латинская земледельческая лексика на индоевропейском фоне, Санкт Петербург, 2009 (նույն րվիմ հրատարակվել է նաև առանձին գրքով) և այլն:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, հետևյալ առենախոսությունների սեղմագրերը. **С.В.Репневская**, Земледельческая лексика Северного Подвинья в ее истории, Москва, 1990, **Л.А.Инютина**, Сельскохозяйственная лексика томского говора (исходное состояние, формирование) Томск, 1993, **С.А.Захарова**, Терминологизация и метафоризация в земледельческой лексике и ее роль в формировании русской картины мира, Саратов, 2012, **Т.М. Алиджанов**, Сельскохозяйственная (земледельческая) лексика лезгинского литературного языка Махачкала, 2003, **М.Ш.Гусейнова**, Земледельческая лексика восточнолезгинских языков, Махачкала, 2004, **С.А.Кукаева**, Лексика земледелия в ногайском языке Махачкала, 2005, **Р.А.Абдулмеджидова**, Сельскохозяйственная и животноводческая лексика в бежтинском языке, Махачкала, 2007, **Ф.Ф.Гаффарова**, Лексика земледелия в татарском языке, Казан, 1999, **Э.Ш.Тания**, Лексика земледелия в абхазском языке, Москва, 2006, **Е.Л.Бабичева**, Земледельческая лексика Деснянско-Сеймского междуречья, Минск, 1990, **Ф.К. Баротов**, Земледельческая терминология в таджикском языке: с привлечением материала английского языка, Душанбе, 2012, **Ж.Гундэгмаа**, Формирование терминологии растениеводства и земледелия в современном монгольском языке Улан-Удэ, 2008 և այլն:

### 1. Լեզվաբանական գրականություն

Այս ուղղությամբ կարևոր նշանակություն ունեն «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակը, Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» և «Հայերեն գառառական բառարանը», որոնցում ընդգրկված են երկրագործական գործիքների նվիրված բազմաթիվ բառահոդվածներ<sup>6</sup>:

Մ. Հաննեյանը հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների մերձավորության աստիճանի և ցեղակցական կապերի բացահայտման նպատակով կատարել է երկրագործական որոշ գործիքների (*եղան, արոր, թի, բիր*) անվանումների կառուցվածքային, իմաստային և տարածքային վերլուծություն<sup>7</sup>:

Լ. Հովհաննիսյանը գրաբարի բառապաշարի իմաստային խմբերը դիտարկելիս քննել է նաև գրաբար մատենագրության մեջ ավանդված երկրագործական գործիքանիշ բառերը<sup>8</sup>:

Գործիքանիշ մի քանի բառերի ծագումնաբանությունն է դիտարկել Ն. Սկրտչյանը<sup>9</sup>, որի տեսակետի շուրջ ծավալված

<sup>6</sup> Տե՛ս Հ. Գաբրիել Անետիքեան, Հ. Խաչատուր Միրմէլեան, Հ. Սկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), հ. Ա, Երևան, 1979, հ. Բ, Երևան, 1980, Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. Ա, Երևան, 1971, հ. Բ, Երևան, 1973, հ. Գ, Երևան, 1977, հ. Դ, Երևան, 1979, Նույնի, Հայերեն գառառական բառարան (ՀԳԲ) (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913:

<sup>7</sup> Տե՛ս Մ.Հաննեյան, Հայերենի հնդեվրոպական բառապաշարի թեմատիկ-իմաստային մի քանի խմբերի տարածքային բնութագիրը (տնտեսական գործունեություն արտահայտող բառեր). – Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պր. 2, Երևան, 1996, էջ 145–227:

<sup>8</sup> Տե՛ս Լ.Շ.Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, մաս II, Երևան, 2012, էջ 70–73:

<sup>9</sup> Տե՛ս Կ.Ա.Մկրտչյան, “Отклонения” от закономерностей армянского языка в свете данных аккадского языка. – Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1979, 4, էջ 219–234, Նույնի, Семитские языки и армянский, Ереван, 2004, էջ 192–218:

քննարկումներում այդ գործիքանիշ բառերի ստուգաբանությանն են անդրադարձել Գ. Ջահուկյանն ու Ի. Դյակոնովը<sup>10</sup>:

*2. Հնագիտական, ազգագրական և պատմագիտական գրականություն*

ա. Բուն երկրագործական գործիքներին նվիրված գրականություն.

Հրատարակվել են մի քանի աշխատություններ, որոնք վերաբերում են Հայաստանի ինչպես հին շրջանի, այնպես էլ նոր և նորագույն շրջանների երկրագործական գործիքներին<sup>11</sup>: Տպագրվել են նաև հոդվածներ Վրաստանում և Ադրբեջանում կիրառված երկրագործական գործիքների վերաբերյալ, որոնցում խոսվում է նաև տեղի հայերի գործածած գործիքների և դրանց անվանումների մասին<sup>12</sup>:

<sup>10</sup> Տե՛ս Գ.Բ.Ջաուկյան, Об аккадских заимствованиях в армянском языке. – ՊԲՀ, 1980, 3, էջ 107–119, 1980, 4, էջ 96–106, Ի.Մ.Դյակոնով, К древневосточному субстрату в армянском языке. – ՊԲՀ, 1981, 1, էջ 56–78:

<sup>11</sup> Տե՛ս Ե.Բայրուրյան, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում. – ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտ. Տեղեկագիր, գիրք I, Երևան, 1938, էջ 193–231, Ս.Թ.Երեմյան, Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении. – Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Երևան, 1964, էջ 9–27, Լ.Խան-Աղեան, Գյուղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ, Տփլիսի, 1898, Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, Երևան, 1927, և այլն:

<sup>12</sup> Տե՛ս Գ.Ս.Չիտայ, Ксанское горное пахотное орудие. – Известия Института языка, истории и материальной культуры им. Н.Я.Мара, V–VI, Тбилиси, 1940, էջ 479–508 (տեքստը վրացերեն է, ունի ռուսերեն /էջ 503–505/ և անգլերեն /էջ 506–508/ անփոփումներ), Նոյնի, Земледельческие системы и пахотные орудия Грузии. – Вопросы этнографии Кавказа, Тбилиси, 1952, էջ 99–111, Գ.Ա.Գուլև, О пахотных орудиях в системах земледелия в Азербайджане. – Азербайджанский этнографический сборник, вып. II, Баку, 1965, էջ 5–29, և այլն:

բ. Երկրագործությանը նվիրված գրականություն.

Հրատարակվել է Վ. Բոլոյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում» հիմնարար մենագրությունը<sup>13</sup>, որում հեղինակը ոչ միայն հանգամանորեն բնութագրում է պատմական Հայաստանի տարբեր տարածաշրջաններում օգտագործված երկրագործական գործիքները, այլև նշում է այդ գործիքների անվանումները հայերենի տարբեր բարբառներում, անդրադառնում այդ անվանումների մի մասի՝ լեզվաբանական գրականության մեջ տրված ստուգաբանությանը, ներկայացնում մատենագրական վկայություններ:

XIX դարավերջին տպագրվել է Հ. Մալխասյանի «Հայ գեղջուկի ալբոմը» աշխատությունը<sup>14</sup>, որում հեղինակը նկարագրում է Ջավախքի երկրագործական գործիքները՝ նշելով տարածաշրջանում այդ գործիքներին տրվող անվանումները: Պետք է նշել նաև Խ. Վերմիշևի հիմնարար ուսումնասիրությունը<sup>15</sup>, որում փաստացի նյութերի հիման վրա տվյալներ են ներկայացված XIX դ. Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում հայերի գործածած երկրագործական գործիքների և դրանց անվանումների մասին:

Հրատարակվել են նաև աշխատություններ, որոնք տվյալներ են պարունակում հայերի կողմից XX դ. գործածված երկրագործական որոշ գործիքների և դրանց անվանումների մասին<sup>16</sup>:

<sup>13</sup> Տե՛ս Վ. Բոլոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972:

<sup>14</sup> Տե՛ս Ազգագրական հանդես, գ. 3, 1889, 1, էջ 359–391: Աշխատության մասերը տպվել են նաև առանձին գրքերով, որոնցից առաջինը նվիրված է դաշտային գործիքներին. տե՛ս Յ. Մալխասեան, Հայ գեղջուկի ալբոմը, մաս Ա, Դաշտային գործիքներ, Թիֆլիս, 1898:

<sup>15</sup> Տե՛ս X.A. Вермишев, Земледелие у государственных крестьян Закавказского края. – Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. 4, ч. I, Тифлис, 1888, էջ 1–564:

<sup>16</sup> Տե՛ս Հ. Մանուէլ վ. Քաջունի, Տարեք երկրագործութեան (տեսական եւ գործնական), Վենետիկ–Մ. Ղազար, 1920, էջ 74–88, 107–112, 174–

գ. Հարակից գրականություն.

Հայկական լեռնաշխարհում երկրագործական գործիքների օգտագործման նյութական վկայությունների տեսանկյունից կարևոր տեղեկություններ կան Հայաստանի ինչպես ընդհանուր (օրինակ՝ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակ), այնպես էլ առանձին շրջանների (օրինակ՝ Խ. Սամուելյանի, Բ. Առաքելյանի, Վ. Աբրահամյանի մենագրությունները) պատմությանը վերաբերող աշխատություններում<sup>17</sup>:

Հարկ է նշել նաև Ի. Ջավախիշվիլու «Վրաստանի տնտեսական պատմություն» (վրացերեն) աշխատությունը, որի առաջին հատորի որոշ գլուխներում մանրամասն վերլուծության են ենթարկված նաև վարելագործիքների մասին մատենագրական վկայությունները և ազգագրական տվյալները, որոնք հեղինակն ուսումնասիրել է Վրաստանի հարևան ժողովուրդների, այդ թվում՝ հայերի գործածած վարելագործիքների հետ համեմատական վերլուծության տեսանկյունից: Հետաքրքրություն է ներկայացնում 5-րդ գլուխը՝ «Վրացական վարելագործիքների ուսումնասիրությունը արտերկրի գործիքների հետ համեմատությամբ», հատկապես 5-րդ՝ «Անդրկովկասում և Թուրքիայում ապրող հայերի վարելագործիքները» և 7-րդ՝ «Հայերի և «թաթարների» վարելագործիքների տերմինների վերլուծություն» ենթագլուխները<sup>18</sup>:

XIX դ. համար անհրաժեշտ է նշել Թիֆլիսում 1885–1887 թթ. հրատարակված «Անդրկովկասի երկրամասի պետական

177, Նույնի, Պարտիզպանութիւն, Վենետիկ–Ս.Ղազար, 1899, 11–13, 24–26, և այլն:

<sup>17</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 133–135, 363, 803–805, Խ.Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 42–50, Բ.Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, հ. 1, Երևան, 1958, էջ 42–43, 203, հ. 2, Երևան, 1964; էջ 208–209, 229, Վ.Ա.Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ., Երևան, 1956, էջ 46–55, և այլն:

<sup>18</sup> Տե՛ս *И.А.Джавахишвили*, Экономическая история Грузии. – *И.А.Джавахишвили*, Сочинения в двенадцати томах, т. 4, Тбилиси, 1996, էջ 256–258, 260–272 (վրացերեն):

գյուղացիների տնտեսական կենցաղի ուսումնասիրության նյութեր» (ռուսերեն) մատենաշարի պրակները, որոնցում տվյալներ կան նաև Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում գործածած երկրագործական գործիքների և դրանց անվանումների մասին<sup>19</sup>: Արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև այդ դարաշրջանում հրատարակված ճանապարհորդական նութերը, որոնցից հիշատակելի է Ա. Փեցհոլդի «Կովկաս. բնապատմական, գյուղատնտեսական և ժողովրդատնտեսական ուսումնասիրություն» գիրքը, որի երկրորդ հատորի «Անդրկովկասի գյուղատնտեսությունը» բաժնի «Հողի մշակումը» ենթաբաժնում ոչ միայն խոսվում է Հայաստանում գործածվող երկրագործական գործիքների ու վերջիններիս անվանումների մասին, այլև սրվում են դրանց գծապատկերները<sup>20</sup>:

XIX–XX դդ. համար անհրաժեշտ է նշել հայերեն ազգագրական հարուստ գրականությունը, որտեղ նույնպես տվյալներ կան երկրագործական գործիքների և դրանց անվանումների մասին<sup>21</sup>:

Սույն աշխատանքի նպատակը հայերենի բարբառներում երկրագործական 7 գործիքների անվանումների համակողմանի քննությունը և դրանց տարածքային բնութագրերը ներկայացնելն է:

Աշխատանքում դիտարկվել են ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրի բառային և հնչյունական զուգաբանություններ բաժիններում ընդգրկված գործիքանիշ 7 հասկացությունների բառա-

<sup>19</sup> St'u Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. I–VII, Тифлис, 1885–1887:

<sup>20</sup> St'u A. Petzholdt, Der Kaukasus: Eine naturhistorische so wie land- und volkswirtschaftliche Studie (ausgeführt im Jahre 1863 und 1864), Bd. 2, Leipzig, 1867, էջ 121–141 (Die Bearbeitung des Boden):

<sup>21</sup> St'u Բուլանըխ կամ Հարք գաւառ, հաւաքեց Բենսէ, Թիֆլիս, 1901, էջ 48, 52–61, Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Աղ. Մխիթարեանց (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա), Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 275–300, Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, աշխատասիրեց Յարութիւն քին. Սարգիսեան /Ալետր/, Գահիրէ, 1932, էջ 43–119, և այլն:

նուններ: Հասկացությունների թվաքանակը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. նախ՝ ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրում «բառային զուգաբանություններ» բաժնում ընդգրկված են երկրագործության հիմնական ոլորտների 4 (արոր, փոցխ, քլունգ, եղան), իսկ «հնչյունական զուգաբանություններ» բաժնում՝ 3 (բահ, մանգաղ, գերանդի) գործիքանիշ հասկացություններ<sup>22</sup>, երկրորդ՝ նշված գործիքները երկրագործության մեջ համարվում են կարևոր ու հիմնական:

Յուրաքանչյուր գործիքի համար քննվել են ինչպես ՀԲԱ նյութերում գրանցված, այնպես էլ չգրանցված, բայց բարբառագիտական կամ ազգագրական գրականության մեջ և բառաբաններում փաստված բառանունները:

Հետազոտության համար տեսական հիմք է ծառայել Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը: Բարբառային միավորների ներկայացման համար հիմք է ընդունվել Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումը<sup>23</sup>:

Հետազոտության համար օգտագործվել են՝

ա. ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերը (շուրջ 460 միավոր),

բ. հայերենի ու այլ լեզուների ստուգաբանական և այլ բնույթի բառարաններ,

գ. լեզվաբանական, մասնավորապես բարբառագիտական աշխատություններ,

դ. Վ. Բոդյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում» մենագրությունը,

ե. վերը թվարկված և այլ աշխատություններ,

զ. մատենագրական գրականություն՝ ցույց տալու քննվող բառի՝ գրավոր աղբյուրներում վկայվելու ժամանակաշրջանը.

<sup>22</sup> Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Երևան, 1977, էջ 35, 153, 125:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 132–136:

ընդ որում մեջբերվել են տեքստային հատվածներ, որպեսզի տվյալ բառի գործածությունը չներկայացվի համատեքստից կտրված:


Նկատի ունենալով բարբառներում գործիքանիշ հասկացությունների բառանունների և դրանց վկայության աղբյուրների մեծ քանակը՝ հղումները տրվել են սողատակում՝ տեքստը չծանրաբեռնելու համար:

Ինչպես նշվեց, աշխատանքում դիտարկվում են գործիքանիշ 7 հասկացությունների բառանուններ: Այդ հասկացությունները դասակարգվել են ըստ դրանցով նշանակված գործիքների կատարած՝ հողը փորելու (բահ, երկբերան բրիչ), հողը վարելու և հարթեցնելու (արոր և գութան, փոցխ), հնձելու (մանգաղ, գերանդի), խոտը հավաքելու (եղան) գործողությունների, թեև կարելի էր դրանք դասակարգել մաս այլ սկզբունքով (օրինակ՝ հարվածային և ոչ հարվածային գործիքներ և այլն):

Յուրաքանչյուր հասկացության բառանունները ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ՝ հնդեվրոպական ծագում ունեցող բառեր (այստեղ ընդգրկվում են մաս այն բարդությունները, որոնց բաղադրիչները նույնպես ունեն հ.-ե. ծագում), փոխառյալ բառեր, չստուգաբանված բառեր, հայակերտ բառեր: Վերջին խմբի բառանունները նույնպես ներկայացվում են որոշակի հաջորդականությամբ՝ պայմանավորված գործիքի կառուցվածքով, կատարած գործողությամբ և այլ հանգամանքներով:

Բարբառային բոլոր ձևերի ներկայացման համար հիմք է ընդունվել հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը<sup>24</sup>:

<sup>24</sup> Տե՛ս Մ.Աղաբեկյան, Ա.Հանեյան, Ռ.Ռառուտյան, Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը. – Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պր. 3, Երևան, 2010, էջ 5–22:



Գ.ԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՂԱՓՈՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ  
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Երկրագործական հողափոր գործիքների շարքում կարևոր դեր են կատարում բահը և երկբերան բրիչը:

1. *Բահ*

Ըստ Հ. Աճառյանի՝ *բահ* «հողը փորելու գործիք՝ երկաթե թի» և *բիր* «մահակ կամ հաստ գառազան» բառերը ծագում են հ.-ե. \**bher-* արմատից: Նա նշում է, որ բառերի հնագույն ձևերն են \**բարի* և \**բիրի*. գրաբարում վերջին հնչյունի անկմամբ առաջինը դարձել է *բահ*, երկրորդը՝ *բիր*<sup>1</sup>: Գ. Ջահուկյանը հ.-ե. \**bher-* նախաձևի դիմաց նշում է միայն *բիր* (*բրեմ*), *բրիչ* (*բրչեմ*) բառերը, իսկ *բահ* բառանվան համար հավանական է համարում իրանական ծագումը՝ նկատի ունենալով հյուսիսիլյան. *-rt->(r)h* անցումը<sup>2</sup>: Լ. Հովհաննիսյանը նույնպես հավանական է համարում *բահ* բառանվան իրանական ծագումը<sup>3</sup>:

*Բահ* բառը վկայված է դեռևս V դ. հայ մատենագրության մեջ: ՆՀԲ-ն ու ՀԱԲ-ը հղել են Ագաթանգեղոսին. «Արդ՝ առեալ թագաւորին փայտատ և *բահ*՝ հատաներ զղիրս հանգստոցաց սրբոցն իրաքանչիւր ըստ չափու արկեղացն»<sup>4</sup>, «... և ի վերայ

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 392–393:

<sup>2</sup> Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան (ՀԼՊՆԺ), Երևան, 1987, էջ 116, 160, 558, 560:

<sup>3</sup> Տե՛ս Լ.Շ.Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարը (V դար), Երևան, 2006, էջ 233:

<sup>4</sup> Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ.Տէր-Սկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Էջմիածին – Տփղիս, 1909, § 766:

եռանդան *բահուց* ջեռուցելոց ի սաստիկ բոց հրատի»<sup>5</sup>: Գտել ենք ոսկեդարյան ևս մի վկայություն Ոսկեբերանի քարգմանություններից մեկում. «Եթե ոչ ի դարբնութենէն ունիցի *գրահն...*»<sup>6</sup>:

Բառանունը գործածվել է նաև հետիմզերորդարյան հայ մատենագրության մեջ: ՆՀԲ-ն հղել է «Վարք հարանց» ժողովածուն<sup>7</sup>: Գտել ենք այլ վկայություններ ևս, որ չեն նշել ՆՀԲ-ն ու ՀԱԲ-ը. «Արժան է ասեն այսքան և այսպիսի օրինակաւ վաստակել եզամբք, և բրել ձեռամբ՝ փայտատօք, և *բահիւք*, և զհակառակ տնկոցն զարմատս, և զբոյսս՝ արմատաքի, խլել»<sup>8</sup> և այլն<sup>9</sup>:

Վկայվել է նաև *բահալոր* բառածևը. «Եւ ըզդորոյ մարդկաց գտունըն կու քակես առանց *բահատր*»<sup>10</sup>, «... այլ և պիտոյ է

<sup>5</sup> Գ.Տէր-Մկրտչեան, Ազաթանգեղոսի աղբիւրներից. Յիշատակ դատակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից, որ վկայեցին Յուռհա, Վաղարշապատ, 1896, էջ 70:

<sup>6</sup> Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն Մատթոս, Գիրք կրկին [հ. Բ], Վենետիկ-Ս.Ղազար, 1826, գիրք Բ, Դառ ԻԷ, էջ 745:

<sup>7</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. Ա, էջ 425 («Վասն *բահի* յոյժ տրամէր, որպէս բրեսցէ զերկիր»):

<sup>8</sup> Գիրք որ կոչի Ընդհանրական, արարեալ սրբազնատրք հայրապետին մերոյ՝ Տեառն Ներսէսի Շնորհալոյ, Սանկտ Պետերբուրգ, 1788, էջ 20:

<sup>9</sup> Տե՛ս Թովմա Մեծոպեցու Յիշատակարանը, հրատարակեց իր յառաջաբանով Կ.Կոստանեանց, Թիֆլիզ, 1892, Բ, էջ 63, Գիրք վաստակոց, քարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ-Ս.Ղազար, 1877, Դուռն ՀԲ, էջ 60, Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896, ԺԱ, էջ 119, ԾԵ, էջ 617 (նույն նախադասությունն առկա է Հովհանիսիկ Ծարեցու XVI դ. ժամանակագրության մեջ /Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ.Ա.Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 248/), Դանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 326:

<sup>10</sup> Նորին Ֆրկանն Ասացեալ բան պիտանի Ընդդէմ Ֆալաքին ի վերայ Չարխի, Դալեհի եւ Դովլաքի եւ վասն Բախտի. - Ֆրիկ, Դիւան, աշխատութիւն սլասկուած Ռուսական զիտութեանց կաճառի կողմից, ի

կացնատր և *բահատր* և մրճատր, որ զմայրին կոտորեն և գղժուարին տեղիսն հարթեալ դիրեն»<sup>11</sup>:

Վաղուհաս գյուղի (ԼՂՀ) մոտ գտնվող Խաղարի վանքի /Խթրավանք/ եկեղեցու (XIII դ. սկիզբ) բեմի ճակատի վիմագիր արձանագրության մեջ նշված է. «... որ և տուի զմեր խաս հողն բլրի հանդի զսենեկպան Ա (1) *բահի ջուր*»<sup>12</sup>:

Ըստ ՀԲԱ նյութերի՝ *բահ* տարբերակը գրանցվել է Պարտիզակում, Արարատում (Դավալու /Արարատի մարզ/), Լոռու մարզի Վարդաբլուր, Սանահին, Թեղուտ, Շամուտ, Ճոճկան, Տավուշի մարզի Շավարշավան (Կոթի), Արագածոտնի մարզի Փարպի, Մառնեուլի (Վրաստան) Խոժոռնի և Դամիա, Իրանի Բիշմիշթափա և Սանգիբարան բնակավայրերում: Հնչյունական *բահ* տարբերակը գրանցվել է 31 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Շապին Կարահիսարի (1\* Շապին Կարահիսար), Ակնի (1՝ Ակն), Սեբաստիայի (1՝ Խոռոնավիլ), Երևանի կամ Արարատյան (14), Ջուղայի (4), Խոյ-Մարաղայի (2) և պարսկահայոց (8) բարբառները: Գրանցվել են առանձին հնչաձևեր Աշտարակի խոսվածքում (*բահ*), Կոտայքի մարզի Բալախովիտ գյուղի (*բահ*) ենթախոսվածքում, Հավարիկի և Կոզենի բարբառներում (*բահ*):

լոյս ընծայեց... Տիրայր արքեպիսկոպոս, Նիւ Եորք, 1952, ԻԷ 14, էջ 372:

<sup>11</sup> Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, ԺԱ, էջ 119:

<sup>12</sup> Արցախ, երկասիրեց Մակար եպս. Բարխուտարեանց, Բագու, 1895, էջ 195: Հ.Թորոսյանը նշում է, որ միջնադարյան Հայաստանում «բահի ջուրը» եղել է չափման միավոր. եթե ջուրը ծածկում էր առվի մեջ իջեցված «բահի երկաթյա մասը, ապա դա կազմում էր մեկ «բահ» ջուր, երկու բահերը ծածկվելու դեպքում՝ երկու «բահ» ջուր և այլն» (տե՛ս Հ.Թորոսյան, Ջրատիրությունն ու ջրի օգտագործման կարգն Արևելյան Հայաստանում /XVII դ./ - Լրաբեր հասարակական գիտությունների /ԼՀԳ./, 1983, 3, էջ 61):

\* Այստեղ և այսուհետև փակագծերում թվերով նշվում է խոսվածքների ու ենթախոսվածքների քանակը:

հարուածն ի բազմապատիկ հարուածոյն, որ ի վերայ նորա են, գուշակէ զեղեալն»<sup>73</sup>:

Փորելու գործիք նշանակութեամբ *փայտատ* բառն առկա է Ազաթանգեղոսի երկում<sup>74</sup>: Հինգերորդարյան մի այլ վկայութեան մեջ նաև նկարագրված է երկրագործութեանը վերաբերող մի ամբողջական գործընթաց. «...այլ որպէս հաճոյ թուեցաւ միաբանելոց ամենեցուն՝ առն իրաքանչիւր արարեալ *փայտատ երկմատնի*, և այնի խարխարեալ յուզեն զթանձրահող հովտացն, սերմանելով ի նմա ցորեան և գարիս, և թէ այլ ունոք իցեն, ի պէտս կելոյ մարդկան. և ի չափ հասեալ հասկացն՝ ծայրախուզ հնձելով ոտնաչուփ կասեալ մարդացի տան հողմոցն հոսելով գարդիւնս շեղջոցն. և արկեալ ի շտեմարանս, զնոյն դարձեալ ինքեանք լեսուն ի ձեռն երկանի...»<sup>75</sup>: Գ. Կարախանյանը նշում է, որ *երկմատնի փայտատ* կոչված գործիքը պահպանվել է միայն համշենահայերի մոտ<sup>76</sup>:

Բառանունը գործածվել է նաև հետագա դարերի հայ մատենագրութեան և թարգմանական գրականութեան մեջ: ՆՀԲ-ն հղել է Եփրեմ Ասորուն, Փիլոն Ալեքսանդրացուն, որոնց գործերում բառանունը գործածվել է «տապար, կացիւն» նշանակութեամբ<sup>77</sup>, և Թովմա Արծրունուն, Ներսես Լամբրոնացուն, Ներսես

<sup>73</sup> Կանոնք Բարաղի Կեսարացոյ, Ե. – Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ.Հակոբեանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 339:

<sup>74</sup> «Արդ՝ առեալ թագաւորին *փայտատ* և բահ՝ հատաներ զգիրս հանգստոցաց սրբոցն իրաքանչիւր ըստ չափու արկեղացն» (Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, § 766):

<sup>75</sup> Եղիշէ, Յայկակերպութիւն Քրիստոսի. – Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Սատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 237:

<sup>76</sup> Տե՛ս Գ.Կարախանյան, Հայոց ժողովրդական մշակույթը (հանրագիտարան երկու հատորով), հ. Ա, Երևան, 2003, էջ 182:

<sup>77</sup> «Եւ կոտորեսցէ, ասէ, զոստս անտառին *փայտատով*...» (Տեառն Եփրեմի Խորին Ասորոյ Մեկնութիւն Աւետարանի համաբարբառ, զվ. Գ. – Սրբոյն Եփրեմի Սատենագրութիւնք, հ. 2, Վենետիկ–Ս.Ղազար, 1836, էջ 37), «...եթէ *փայտատ* ի պիտանացու ծառս մատուցանէ...» (Փիլոնի Յաղագս Յովնանու. – Փիլոնի Երբայեցոյ Սնացորդք ի

բառից (*փայտ* + *ատ* /*հատ-ա-նեն*-ի *հատ-ից*/)՝ սկզբում նշանակելով «կացին» և հետագայում միայն ձեռք բերելով «երկբերան բրիչ» նշանակությունը<sup>88</sup>: Ի. Դյակոնովը նույնպես նշում է *փետատ*-ի՝ *փայտատ*-ի հնչյունափոխությունից առաջանալու հանգամանքը՝ հերքելով նրա՝ աքքադերենից փոխառյալ լինելը<sup>89</sup>:

*Փետատի՝ փայտատ*-ից առաջանալու մասին են խոսում նաև տարբեր բարբառներում *ե* հնչյունի և *այ* երկբարբառի հնչյունափոխությունները:

Հ. Աճառյանը Համշենի բարբառի Մալայի խոսվածքում և Ճենիկի շրջանի ենթախոսվածքներում փաստել է *փսնդաղ* (*փայտատ* > *փսնդաղ*) տարբերակը՝ նշելով, որ նշված խոսվածքում ու ենթախոսվածքներում հայերենի *այ* երկբարբառը հնչյունափոխվում է ոչ թե *ե*-ի, որը բնորոշ է Տրապիզոնի շրջանի ենթախոսվածքներին, այլ *սն*-ի (ինչպես *հայր* > *հսր*, *փայտ* > *փսնդ*, *գալլ* > *կսնլ*, *քայլել* > *քսնուշ*, *փայտատ* > *փսնդաղ* և այլն)<sup>90</sup>: Ինչ վերաբերում է նշված ենթախոսվածքներում հնարավոր *փետատ* > *փսնդաղ* հնչյունափոխությանը, ապա հայտնի է, որ ընդհանրապես այդ բարբառում բազմավանկ բառերի առաջին վանկի բառամիջյան *ե*-ն հնչյունափոխվելիս միշտ դառնում է *է*, բացառությամբ մի քանի դեպքերի, երբ *ե*-ն սղվում է, իսկ եզակի դեպքերում՝ դառնում *ը*, *ը*, *ի* կամ *օ*<sup>91</sup>: Համենայն դեպս, այդ բարբառի համար նշված չէ որևէ դեպք, երբ բազմավանկ բառի առաջին վանկի բառամիջյան *ե*-ն հնչյունափոխվի *սն*-ի: Հետևաբար, այդ բարբառի Մալայի խոսվածքում և Ճենիկի շրջանի ենթախոսվածքներում առկա *փսնդաղ* բառաձևը ծագում է

<sup>88</sup> Տե՛ս Գ.Б.Джаукян, Об аккадских заимствованиях в армянском языке, . – ՊԸՀ, 1980, 4, էջ 97:

<sup>89</sup> Տե՛ս И.М.Дьяконов, К древневосточному субстрату в армянском языке, էջ 73–74:

<sup>90</sup> Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 35:

<sup>91</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26–27:

կազմված է *փետել* բառի *փետ* բայարմատից, ապա ի՞նչ եղան գործիքի հին՝ *փայտատ* անվանումը և նրա բարբառային հնչյունական տարբերակները:

Կ. Գաբրիկյանը Սեբաստիայի բարբառի ուսումնասիրությանը նվիրված գրքում *փէտատ* բառը գրանցել է *փէտատ* ձևով՝ ելնելով իր վերոնշյալ տեսակետից: Մինչդեռ ՀԲԱ նյութերում Սեբաստիայի բոլոր խոսվածքներում գրանցվել է *փէդադ* տարբերակը:

Սեբաստիայի բարբառում Կ. Գաբրիկյանը արձանագրել է նաև *փէտըտել* «փետատով փորել, բրել» բայը<sup>95</sup>:

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ գրանցվել են նաև բառակազմական տարբերակներ: Մուշի բարբառում փաստվել է *փէտըտուօր* «տապարատր, տապարով զինուած»<sup>96</sup> ածանցավոր բառը: Ջեյթունում գործածվել են *քօքի փիտօտ* (արմատներ հանելու համար) և *կազի փիտօտ* (զազի փշեր կտրելու համար) անվանումներով երկբերան բրիչները<sup>97</sup>: Սասունում այն կոչվել է նաև *էրգուպէրնէն փիդադ*<sup>98</sup>: Համշենի տարբեր խոսվածքներում արձանագրվել են հետևյալ ձևերը. *թօնար փետատ* (Սաթարիա /Պլատանա/), *պիպէխլի* կամ *թարաքլի փետատ* (Տրապիզոնի շրջակա գյուղեր), *թօխրի* կամ *ցօնքի փետատ*, *քէշուշի* կամ *քադհօնի փետատ*<sup>99</sup>:

Ակնի բարբառում գործածվել է *փատուօր* «բրտր» բառը, որ նաև ունի փոխաբերական իմաստ՝ «բիրտ մարդ» (բարբառում *փայտ* բառը հնչյունափոխվում է *փատ*-ի)<sup>100</sup>: *Փէտատ* բառի՝ փոխաբերական իմաստով գործածության ուշագրավ

<sup>95</sup> Տե՛ս Կ.Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 548:

<sup>96</sup> Տե՛ս ՀԳԲ, էջ 1063:

<sup>97</sup> Տե՛ս Վ.Հ.Բդոյան, նշվ. աշխ., էջ 82, 87:

<sup>98</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 90:

<sup>99</sup> Տե՛ս Բ.Գ.Թռռլաքյան, Համշենահայերի ազգագրությունը. – Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, 13, Երևան, 1982, էջ 119:

<sup>100</sup> Տե՛ս Մ.Ս.Գաբրիէլեան, Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն, Վիեննա, 1912, էջ 349:

*Քըլունգ*

Հայերենի բառարաններում բառի ստուգաբանությունը չենք գտել: Կարծում ենք, որ այն ծագում է պարսկ. kolāng «բրիչ, հողուրագ, քահ» ձևից<sup>146</sup>: Ինչ վերաբերում է փոխառության աղբյուրին, ապա բացառված չէ, որ որոշ խոսվածքներում այն փոխառվեր միջնորդ լեզվից՝ թուրք. külünk «բրիչ» ձևից<sup>147</sup>:

Բառանունը վկայված է XVII դ. հայ մատենագրության մեջ. «... քանզի էառ ի ձեռն իւր մուրճ, որ է *քլունկ* և սկսաւ շրջագայիլ ի մէջ վանիցն...»<sup>148</sup>:

ՀԲԱ նյութերում բառը գրանցվել է հայերենի բարբառների 222 խոսվածքներում ու ենթախոսվածքներում:

*Քըլունգ* // *քըլունկ* /նաև համապատասխան *քըլունգ*, *քըլունգ*, *քըլունգ* և նման հնչաձևերով/ տարբերակներն արձանագրվել են 173 խոսվածքներում ու ենթախոսվածքներում և ընդգրկում են Երևանի կամ Արարատյան (35), պարսկահայոց (22), Բայազետի (7), Դիադինի (4), Վանի (25), Խոյ-Մարաղայի (34), Ղարաբաղի (13), Ղազախ-Կիրովաբադի (3), Կոզենի (1), Պոլսի (3), Կարինի (4), Մուշի (19), Համշենի (3՝ Ճենիկ, Ծեբելդա, Օրմոնքոյ) միջբարբառներն ու բարբառները:

*Քուլունգ* (*քուլընգ* // *քուլինգ*) /նաև համապատասխան *քուլինգ*, *քուլունգ*, *քուլունգ* և նման հնչաձևերով/ տարբերակները գրանցվել են Եվրոկիայի (1՝ Եվրոկիա) միջբարբառում, Ասլանբեկի (1՝ Ասլանբեկ), Հավարիկի (1՝ Հավարիկ) բարբառներում, Պոլսի (2՝ Ռոդոսթո, Պարտիզակ), Ղազախ-Կիրովաբադի (4) միջբարբառների, Կարինի (3), Սասունի (1՝ Գոմք), Մուշի (6), Վանի (3՝ Վանք, Բժնկերտ, Չենիս), Երևանի կամ Արարատյան

<sup>146</sup> Տե՛ս Персидско-русский словарь, т. 2, Москва, 1985, էջ 343, Ն.Սկրտչյան, Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում, Երևան, 2007, էջ 29, 30:

<sup>147</sup> Տե՛ս, օրինակ, Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, էջ 376, Մ.Ասատրյան, նշվ. աշխ., էջ 252, Ա.Մարգարյան, նշվ. աշխ., էջ 542, և այլն:

<sup>148</sup> Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, ԼԸ, էջ 501–502:

կողմը, համի և առատամի միացման տեղը, բացուի և վերջինները հեռանան մեկնեկից, կասուի *արորն եղաւ չախու* (դանակ). եթէ արորի ծայրը կանդորի մեջից ծռուի և ելնէ լծան վրայ, կասեն *արորը տանկացաւ...* եթէ առատամի ծայրը, խուիի տակ, թաց հող բռնէ և արորը չմտնէ ի հող, կասեն *արորի կլամն է բռներ»*<sup>11</sup>:

Ազգագրական գրականության մեջ գրանցվել են *aratrom* ձևից ծագող այլ տարբերակներ ևս՝ *համէլ*, *արօնա* // *հարօնա*, որոնք հայերենը փոխառել է այլ լեզուներից:

### Համէլ

Ախալքալաքի Փոքր Գյոնդուրա գյուղի ենթախոսվածքում գրանցվել է *համէլ* տարբերակը<sup>12</sup>, որի փոխառության աղբյուր կարող էր լինել արևելաթուրք. *haral* «արոր, մշակութիւն, վարուցան» ձևը: Վերջինս, ըստ Հ. Աճառյանի, հ.-ե. փոխառություն է (գուցե ոռու. *орало* «արոր» ձևի՞ց)<sup>13</sup>: Ի դեպ, թուրքերեն բարբառների Ախլաթի (Խլաթ /Բիթլիս/) խոսվածքում առկա է *harol* «ցորենը ուղիղ գծով ցանելուն նպաստող արոր, որ հետևից ունի երկու երկար տախտակ» բառը<sup>14</sup>, որը Ռ. Դանկոֆը և այլ հեղինակներ համարում են փոխառություն հայերեն բարբառային *հարոր* ձևից<sup>15</sup>:

### Արօնա // հարօնա

Ախալքալաքի և Ախալցխայի որոշ բնակավայրերում *արոր* // *հարոր* բառանվան հետ մեկտեղ գործածվել է նաև *արօնա* // *հարօնա* բառը<sup>16</sup>: Ըստ Հ. Մալխասյանի՝ այդ անունները կրող արորների միջև տարբերությունն այն է, որ «արօնան

<sup>11</sup> Բենսէ, նշվ. աշխ., էջ 57:

<sup>12</sup> Տե՛ս Վ.Հ.Բրդյան, նշվ. աշխ., էջ 249:

<sup>13</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 350, հմմտ. М.Фасмер, Этимологический словарь русского языка, пер. с немецкого и дополнения О.Н.Трубачева, т. 3, Москва, 1987, էջ 439:

<sup>14</sup> Տե՛ս DS, с. VII, Ankara, 1974, էջ 2294:

<sup>15</sup> Տե՛ս R.Dankoff, նշվ. աշխ., էջ 23, A.Tietze, Tarihi ve Etimolojik Türkiye Türkçesi Lugatı, с. 2. F-J, Wien, 2009, էջ 262:

<sup>16</sup> Տե՛ս Վ.Հ.Բրդյան, նշվ. աշխ., էջ 154:

ներ), *վեցկավեր, վիսկավեր* (Ղարաբաղի բարբառ), *վիծկալօր* (Խոյի, Վանի բարբառներ) /բոլորն էլ՝ «վեցկիով վար անող»/ ածանցավոր և *վեցկավար, վիսկավար* «վեցկիով կատարվող վար» (Ղարաբաղի բարբառ) բարդ բառերը<sup>44</sup>: Ա. Սարյանը փաստել է *վեցկավար* բառի գործածությունը Չհարմահալի հայկական բնակավայրերում<sup>45</sup>: Վ. Բոդյանը նշում է, որ Գորիսի խոսվածքի Տեղի և այլ ենթախոսվածքներում գործածվել է *մընթըվանի վեսկի* բառակապակցությունը (այդպես կոչվող արորի համի մի կողմին ամրացվել է տախտակ, որի միջոցով վարի ժամանակ թեք լանջերի հողը շրջել են դեպի ներքև. նման վարը կոչվել է *մընթըվանի վար*)<sup>46</sup>:

Հ. Աճառյանը *վեցկի* բառի ծագումը կապում է բնիկ հայերեն *վեց* արմատի հետ՝ այն նշելով համապատասխան բառահողվածի գավառական բառերի շարքում՝ այդտեղ ընդգրկելով նաև *վեցկաոոր* ձևը<sup>47</sup>, որ նշանակում է «հերկող, երկրագործ»<sup>48</sup>: ՀԳԲ-ում նշվում է, որ Բաբերդի խոսվածքում *վեցկին* նշանակում է «վեց լուծ լծուած գութան», իսկ արոր նշանակությունն ունի Երևանի (*վեսքի*), Խոյի և Ղարաբաղի (*վօսկի*), Մալմաստի և Վանի (*վիծկի*) բարբառներում<sup>49</sup>: Կ. Շահնազարյանցը, որը հրատարակության է պատրաստել Սմբատ Սպարապետի Տարեգիրքը, *վեցկի* բառի ծանոթագրության մեջ նշում է. «Գութան եւ *վեցկի*՝ կրկին գործիք արօրադրելոյ զերկիր, այսու տարբերին ի միմեանց. զի առաջինն ձգի յեօթն լուծ եզանց կամ գոմշոց. երկրորդն՝ յերկոց լծոց, ուստի *վեցկին* նշանակել որպէս թէ վեցեկի»<sup>50</sup>:

<sup>44</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 2, Երևան, 2010, էջ 62:

<sup>45</sup> Տե՛ս Ա.Սարեան, նշվ. աշխ., էջ 391:

<sup>46</sup> Տե՛ս Վ.Հ.Բոդյան, նշվ. աշխ., էջ 177:

<sup>47</sup> Տե՛ս Տե՛ս ՀԱԲ, հ. Դ, էջ 333:

<sup>48</sup> Տե՛ս ՀԳԲ, էջ 1000:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>50</sup> Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, որդոյ Կոստանդեայ կոմսին Կոռնիկոսոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, ծան. 31, էջ 147:

ցականացնելու Արևելահայաստանում գործածված գործիքի հայերեն անվանումը<sup>57</sup>:

Քանի որ նշվեց ժողովրդական ստուգաբանության մասին, ապա նման մի ստուգաբանություն էլ ներկայացնենք մեր կողմից:

<sup>57</sup> Եվ ոչ միայն հայերեն անվանումը: Օրինակ՝ *վեսլի* կոչվող արորից հետո Ի.Ջավախիշվիլին խոսում է նաև *չուք* կոչվող արորի մասին (տարբեր լեզուների բարբառներում՝ *չուք*, *ջուք*, *ջուք*, *չիֆթ*), որն օգտագործում են ինչպես վրացիները (միայն Արևելյան Վրաստանում), այնպես էլ հայերն ու թուրքերը (նկատի ունի աղբբեջանցիներին): Գտնելով, որ կասկածելի է այդ բառանվան ծագումը պարսկերեն *ջուխտ* «գույգ» ձևից, նա առաջարկում է բառանվան ծագումը վրացերեն *չուք* «կոշիկ» ձևից (տե՛ս *И.А.Джавახишвили*, նշվ. աշխ., էջ 264):

Պետք է նշել, որ գործիքանիշ անվանումները սեփականացնելու գործում ավելի հեռուն են գնում աղբբեջանցի հեղինակները: Օրինակ՝ Գ.Գուլիևը, մեջբերելով վրաց հեղինակ Գ.Չիտայայի հետևյալ նշումը վրացերեն «ջիլդա գոգորա» կամ «երկվանի» կոչվող առաջքային (անվավոր) գործիքի կապակցությամբ՝ «Նորվրացերեն խոսվածքներում երկվանի (վերկվանի) նշանակում է վարելագործիքի բռնակոթ: Հայերենում «հերկել»-ը արտահայտում է «հերկել» հասկացությունը: Ինչ վերաբերում է «ջիլդա գոգորա»-ին, ապա դրանում երկրորդ՝ «գոգորա» մասը նշանակում է անիվ, իսկ բառի առաջին մասի ստուգաբանությունը սլարգ չէ: Սակայն «ջիլդա» բառով Վրաստանի հարավային շրջաններում և Հայաստանի որոշ մասերում անվանում են լծկան վարելագործիքները» (*Г.С.Читая*, *Пахотные орудия и системы земледелия в Грузии*, Москва, 1960, էջ 5–6), հանգում է մի տարրինակ եզրակացության. «Պետք է նշել, որ «երկվանի», «հերկել» և «ջիլդա» բառերի ստուգաբանությունը հեշտ է բացատրել աղբբեջաներենով... աղբբեջանական երկրագործական կենցաղում ակոսի այլ անվանումների կողքին գոյություն են ունեցել նաև այսպիսիք՝ *հօթ*, *հօթեքալ*, *լօթեքալ*, *չալա*: Մեզ թվում է, թե այդ բոլոր անվանումները կապված են առաջքային վարելագործիքի հետ: Եթե դա այդպես է, ապա կարելի է եզրակացնել, որ գործիքի այդ տեսակը, չնայած ազգագրական նյութերում դրա բացակայությանը, լայնորեն գործածվել է մինչհիդալիֆական Աղբբեջանում» (*Г.А.Гулиев*, *О пахотных орудиях в системах земледелия в Азербайджане*. – *Азербайджанский этнографический сборник*, вып. II, Баку, 1965, էջ 17):

Ինչ վերաբերում է */սիշ/* «արօր» բառանվանը, ապա այն փոխառված է պարսկ. *xiš* «գութան, արոր» ձևից<sup>104</sup>: Ի դեպ, աղբրեջաներենում նույնպես գործածական է այդ բառը, որը փոխառյալ է համարվում պարսկերենից<sup>105</sup>:

### *Չոթ*

Ըստ Հ.Աճառյանի՝ բառը ծագում է պահլավ. *juxt* «զույգ» ձևից. պարսկերենից են փոխառյալ թուրքերեն *çift* «զույգ, հերկ», քրդերեն *joť, jut* և զազա *jit* «արոր» բառերը: Հայերենի բարբառներում բառանունը փոխառվել է թուրքերենից և քրդերենից<sup>106</sup>:

ՀԲԱ նյութերում բառանունը իր հնչյունական տարբերակներով գրանցվել է հայերենի բարբառների 112 խոսվածքներում ու ենթախոսվածքներում: *Չոթ*, *չոթ*, *չոտ*, *չոտն*, *ջոթ* տարբերակները գրանցվել են 107 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Եվդոկիայի (1՝ Եվդոկիա) և Ղազախ-Կիրովաբադի (7) միջբարբառները, Տիգրանակերտի (2՝ Տիգրանակերտ, Սևերեկ), Մալաթիայի (1՝ Մալաթիա), Խարբերդ-Երզնկայի (2՝ Բազմաշեն, Սվջող), Եդեսիայի (1՝ Եդեսիա), Բեյլանի (1՝ Սովդուլիս և Աթրիս), Սասունի (7), Տավրիկ-Մոտկանի (5), Մուշի (14), Վանի (2՝ Վան, Ծոկու), Դիադինի (1՝ Ջուջան), Կարինի (10), Երևանի կամ Արարատյան (36), Բայազետի (1՝ Կարբի/ՎԲ Բայազետից/), Խոյ-Մարաղայի (9), Ագուլիսի (1՝ Տղնա), Ղարաբադի (5), Կոզենի (1՝ Կոզեն) բարբառները: Արձանագրվել են նաև այլ հնչյուններ հայերենի բարբառների 2 խոսվածքներում՝ *ջոթ* (Մարաղա /Իրան/), *չիթ* (Շապին Կարահիսար), և 3 ենթախոսվածքներում՝ *չոթ* (Վ.Կարմիրաղբյուր /Տավուշի մարզ/), *ճոթ* (Արտաշատ /Արարատի մարզ/), *ջոթ* (Պտղնի /Կոտայքի մարզ/):

<sup>104</sup> Տե՛ս *Персидско-русский словарь*, т. 1, Москва, 1985, էջ 595:

<sup>105</sup> Տե՛ս *Klassik Azərbaycan ədəbiyyatında işlənən ərəb və fars sözləri lüğəti*, Bakı, 2005, с. 1, էջ 279:

<sup>106</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 133:

Ճատընտիր ժողովածուն («Ոչ ուստեք գտանի ողորմութիւն, բայց ի տեղիս տեղիս շարժին ի սերն Քրիստոսի, ոմն պատարագ եւ ընծայ նուիրելով, ...եւ ոմն ռխլ առնելով, եթէ ազարակ եւ կամ ջրադաց, եւ այլ ոք՝ *գուրան*»<sup>195</sup>): *Գուրան* բառով կազմված մի արտահայտություն ենք գտել Գոշավանքի Ս. Աստվածածին եկեղեցու ներսի հյուսիսային մուտքի կամարի նվիրատվական արձանագրությունում (XII–XIII դդ.). «... եւ տուաք ի մեր հայրենեացն Յողջբերդ այգի մի եւ Ա *գուրանի հող*...»<sup>196</sup>, որտեղ «գուրանի հողը» գուրանով մեկ օրում վարելիք հողի մակերեսի չափման միավոր է: Նույն արտահայտությունն առկա նաև Սաղմոսավանքի գրատան XIII դ. նվիրատվական արձանագրությունում. «...Ա *գուրանի հող* ճաղագովն ջրովի եւ սոքա խոստացան ի տարին...»<sup>197</sup>:

Անդրադառնալով *արոր* բառանվանը՝ պետք է նշել, որ հայ մատենագրության մեջ և քարգմանություններում ավանդված են դրանով կազմված բարդ և ածանցավոր բազմաթիվ բառեր:

*Արոր ձգել*. ՆՀԲ-ում այս հարադրական բարդությունը հղված չէ, թեև ավանդված է դեռևս V դարից. այն գտել ենք Ոսկեբերանի գործերի քարգմանություններում. «Եթող զարջառաց գնախիրս, զի *արոր ձգեսցեն*, և գերկիր հերկեսցուք և սերմանեսցուք...»<sup>198</sup>, «...եզն ո՞չ էր արդեօք օգնական *արոր ձգելով* և աշխատակից մեզ լինելով ի սերմանցն սպիռումն...»<sup>199</sup>, «Նոյնպէս և մշակ լծէ եզինս և *արոր ձգէ* և ակօս պատառէ...»<sup>200</sup>:

<sup>195</sup> Ճատընտիր, ԻԹ, 715 (տե՛ս ԲՍՀ, էջ 147):

<sup>196</sup> Դիվան հայ վիմագրության, պր. 6, Իջևանի շրջան, կազմեցին Ս.Ա. Ավագյան, Հ.Ս.Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 85:

<sup>197</sup> Տե՛ս Գ.Հ.Կարախանյան, Հայաստանի միջնադարյան կենցաղային քանդակները, էջ 34:

<sup>198</sup> Ոսկեբերան, Յարարածան, Գ. – Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Ճառք, էջ 73:

<sup>199</sup> Նույնի, Յարարածան, Գ. – Նույն տեղում, էջ 76:

<sup>200</sup> Նույնի, Յաղագս յարութեան մեռելոց. – Նույն տեղում, էջ 224:

*Արօրածիզ* «որ ձգէ զարօր, արօրադիր» (ՆՀԲ)<sup>201</sup>. ՆՀԲ-ն հղել է Պիտոյից գիրքը<sup>202</sup>, Փիլոն Ալեքսանդրացուն<sup>203</sup>, Սարգիս վարդապետին<sup>204</sup> (ի դեպ, վերջինիս գործի երկրորդ հրատարակութեան մեջ *արօրածիզ* բառը փոխարինված է *ակօսածիզ* բառով<sup>205</sup>): Գտել ենք ՆՀԲ-ում չհղված վկայություններ Ոսկեբերանի և Բարսեղ Կեսարացու երկերի թարգմանություններում. «...քանզի յաղագս... երիվարաց և ջորոց և *արօրածիզ եզանց* և հօտից և խաչանց բազմանարյ...»<sup>206</sup>, «Յովհաննու կեանքն միայն պահք էին, որ ո՛չ մահիճս ունէր..., ո՛չ *արարածիզ* եզն...»<sup>207</sup>:

*Արօրավար* «արօրով վարած, հերկած» (ՀԲԲ). «...և իբրու ի ծառոց քաղելով պտտտ, և յերկիր ոմն *արօրավար* յարգանդին, անտեսս մանրկութեամբ, և անստեղծ կենդանիս սերմանելով»<sup>208</sup>:

<sup>201</sup> Մխիթար վրդ. Սեբաստացու բառարանում՝ «զարօր ձգող, քաշող» (Բառգիրք հայկազեան լեզուի..., արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ (ԲՀԼ), հ. 1, Վենետիկ, 1749, էջ 115), նույնը նաև Ս.Սալիսասյանցի մոտ՝ «Արօրը ձգող՝ քաշող. վար անող /եզներ/» (ՀԲԲ, հ. Ա, էջ 289):

<sup>202</sup> Տե՛ս Գիրք Պիտոյից, աշխ. Գ.Մուրադյանի, Երևան, 1993, էջ 175 (Սահման բաղդատութեան, 5) («Սնանի եւ երկասէր *արօրածիզ*ս անպաճոյճ եւ դիրագիտ կերակրանօք...»):

<sup>203</sup> Փիլոնի Այնոցիկ որ ի լինելութեանն, III Գ. – Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդք ի Հայս, էջ 170–171 («Երկրի, արջա՛ն, քանզի *արօրածիզ* է և երկրագործ»):

<sup>204</sup> Վարդապետ Սարգիս, նշվ. աշխ., էջ 117 («...և զեզն *արօրածիզ* ընդ լծով ամել...»):

<sup>205</sup> Տե՛ս Սեկնութիւն եօթանց թղթոց Կաթողիկեայց, արարեալ երանելոյն Սարգսի շնորհալից վարդապետին Հայոց իմաստասիրի և քաջ հռետորի, աշխատասիրութեամբ Տ. Անդրեաս վարդապետի Նարինեան Ակնեցոյ, Կոստանդինուպօլիս, 1826, էջ 93:

<sup>206</sup> Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպօլիսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց և նահատակութեան Սրբոյն Գրիգորի Հայոց մեծաց հայրապետի ի Կոկիսոն հայոց մինչ յաքսորանս էր. – Սովետք հայկականք, հ.Գ, էջ 57:

<sup>207</sup> Ս.Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, աշխատասիրութեամբ Կ.Մուրադյանի, Ս.Էջմիածին, 2008, էջ 71:

<sup>208</sup> Պղատոնի առ Տիմեոս. – Պղատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք, Վենետիկ–Ս.Ղազար, 1877, էջ 173:

նել» (փոխաբերական իմաստով՝ «հետքը կորցնել», «համահար-  
թել»)՝<sup>33</sup>։ Հ. Մարգարյանը *ցաքէլ* «սերմանուած արտը յարդարել,  
ակօսները գոցել» բայը գրանցել է Բալոյի ենթախոսվածքում,  
ընդ որում, այդ ենթախոսվածքում այդ նույն բառը գործածվել է  
նաև փոխաբերական իմաստով՝ «ծածկել, պահել, ուրիշին  
չգիտցնել»<sup>34</sup>։ Մոկսի տարածաշրջանի ենթախոսվածքներում առ-  
կա է *ցմբիլ* «տափանել» ձևը<sup>35</sup>։ Հ. Աճառյանը վկայել է *ցաքէլ*  
(Նոր Բայազետ) և *ցաքանէլ* (Խիան, Ղարաբաղ) «ցաքանով ար-  
տին հողը հաւասարեցնել» բայերը, *ցաքանօր* «ցաքանող մշակ»  
(Խիան) և *ցաքլից* «ցաքանին մասերէն մէկը» բառակազմական  
տարբերակները<sup>36</sup>։ Բ. Մաղաթյանը Արագածոտնի մարզի Ապա-  
րանի և Արագածի շրջաններում վերաբնակված ալաշկերտցի-  
ների ենթախոսվածքներում արձանագրել է *ցակվօր* «տափան  
անող», *ցակլիս* և *ցակճաղ* «տափանի ճյուղ» բառաձևերը<sup>37</sup>։ Ա.  
Մարգարյանը Գորիսի խոսվածքում գրանցել է *ցմբէլ* «ցաքա-  
նել», (փոխաբերական իմաստով՝ «մեկին անպատվել, խոսքով  
լռեցնել»), *ցիքանէլ* «ցաքանով ցանած արտը տափանել՝ հավա-  
սարեցնել» բայաձևերը, *ցիքանվէր* «ցաքանող մշակ» ածանցա-  
վոր բառը և հետևյալ բարդությունները՝ *ցիքանամար*, *ցիքանմէր*  
«ցաքանի գլխավոր երկու ճյուղերը, որոնց հազցվում են ճախե-  
րը», *ցիքնըքաշի* «ցաքանը գետնից բարձր պահող երկճյուղ  
փայտը»<sup>38</sup>։ Մասունի բարբառում գործածվել է *ցաքանիլ* ձևը,  
*ցաքզընցիլ* «տափանը լուծին միացնող շղթա» բարդությունը<sup>39</sup>։

1910-ական թթ. Արևմտահայաստանում գործածում էին  
*անուտր ցաքան*, *սեպատր ցաքան*, *կեռ ցաքան* անունները կրող

<sup>33</sup> Տե՛ս Բ.Մ.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 243:

<sup>34</sup> Տե՛ս Յ. քհն. Մարգարյան (Ալեւոր), նշվ. աշխ., էջ 543:

<sup>35</sup> Տե՛ս Ի.Օրբելի, նշվ. աշխ., էջ 338:

<sup>36</sup> Տե՛ս Հ.Բ., էջ 1054:

<sup>37</sup> Տե՛ս Բ.Մ.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 243:

<sup>38</sup> Տե՛ս Ալ.Մարգարյան, նշվ. աշխ., էջ 486-487:

<sup>39</sup> Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 161:

գործիքներ<sup>40</sup>: 1960-ական թթ. Խորհրդային Հայաստանի ցանքատարածքներում օգտագործում էին գործիքներ, որոնք մասնագիտական գրականության մեջ հիշատակված են *ատամնավոր ցարան*, *գսպանակավոր ցարան*, *սկավառակավոր ցարան* բանակապակցություններով<sup>41</sup>:

### Գրրաբլի

Բառի փոխառության աղբյուրը հայերենի բառարաններում և գրականության մեջ չենք գտել: Անշուշտ, այն փոխառված է ռուսերեն *грабли* «փոցխ» ձևից<sup>42</sup>:

ՀԲԱ նյութերում *գրրաբլի* բառանունն արձանագրվել է Նախիջևանի ենթախոսվածքում: Հնչյունական տարբերակներով (*գրրաբըլլ*, *կըռաբլի*, *կըրնբիլ* և այլն) այն գրանցվել է հայերենի բարբառների Կարինի (1՝ /Մեծ Սամսար /ՎԲ/), Ղարաբաղի (19), Շամախիի (3), Ագուլիսի (1՝ Տանակերտ), պարսկահայոց (1՝ Շավրավա /Ն.Բուրվարի/) բարբառների, Ղազախ-Կիրովաբադի (6) միջբարբառի որոշ խոսվածքներում ու ենթախոսվածքներում: Շամխորի Բարսում և Օրջոնիկիձե բնակավայրերում գրանցվել է *հըրնբլի* տարբերակը, իսկ ԼՂՀ Խրմանջուղ գյուղում՝ *ղըրաբիլ* ձևը:

### Չանգալ

Բառը փոխառյալ է պարսկերեն *čang* բառից սերող *čangāl* / *čangal* «կորացրած մատներով ձեռք, թաթ, ճանկ...» ձևից<sup>43</sup>: Այն

<sup>40</sup> Տե՛ս Ցարան. – Գիտաոճես, 1913, 8, էջ 122–123:

<sup>41</sup> Տե՛ս Ղ.Թ.Խուրդյան, Ընդհանուր երկրագործություն, Երևան, 1963, էջ 84, 86:

<sup>42</sup> Բառի ստուգաբանությունը տե՛ս *М.Фасмер, Этимологический словарь русского языка*, т. 1, էջ 450:

<sup>43</sup> Տե՛ս *В.С.Расторгуева, Д.И.Эдельман, Этимологический словарь иранских языков*, т. 2, էջ 220–221, *Հ.Աճառեան, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրայ...*, էջ 271:

Ն. Սկրտչյանը Գամիրքի խոսվածքում արձանագրել է *թըրփան* բառով կազմված *թըրփան զարնէլ* արտահայտությունը ինչպես «հնճել» նշանակությամբ, այնպես էլ փոխաբերական՝ «մաքրել, վերջացնել» իմաստով («Սեղանին վրբան պանըմն է մընացած չէ, կիտէս քի *թըրփան զարկէր* ին»)՝<sup>34</sup>:

Հ. Աճառյանը Համշենի բարբառում գործածվող *թրփոն* ձևը նշում է թուրքերեն բառերի շարքում<sup>35</sup>: Ու. Բլեզինգը նշում է, որ Համշենի թուրքերեն խոսվածքներում նույնպես կա այդ հինչա-ձևը՝ *terpon* «գերանդի»<sup>36</sup>: Անկասկած է, որ այն փոխառյալ է թուրքերեն *tırpan* «մանգաղ, գերանդի» բառից<sup>37</sup>: Ինչ վերաբերում է բառանվան ստուգաբանությանը, ապա Ս. Նշանյանը, ով թուրքերենի ստուգաբանական բառարանի հեղինակ է<sup>38</sup>, բառարանի՝ համացանցում դրված տարբերակում նշում է, որ այն ծագում է հունարեն *δρέπανον* «մանգաղ» ձևից<sup>39</sup>:

Հունարեն ձևն առկա է բազմաթիվ լեզուների մի շարք բառակազմություններում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են *մանգաղ* և *գերանդի* անվանումներին: Մանգաղի ձև ունենալու պատճառով Դրեպանա /այժմ՝ Թրապանի/ է կոչվել Սիցիլիա կղզու ավերված քաղաքներից մեկը. համաշխարհային պատմության մեջ հայտնի է Ք.ծ.ա. 249 թ. Դրեպանայի պատերազմը Կարթագենի և Հռոմի միջև:

<sup>34</sup> Տե՛ս Ն.Ա.Սկրտչյան, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, էջ 409:

<sup>35</sup> Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 267:

<sup>36</sup> Տե՛ս U.Bläsing, նշվ. աշխ., էջ 141, 142, նաև DS, c. X, էջ 3894:

<sup>37</sup> Տե՛ս Յակովբոս Պոզաճեան, նշվ. աշխ., էջ 240, Турецко-русский словарь, էջ 623:

<sup>38</sup> Տե՛ս S.Nişanyan, Sözlerin Soyağacı: Çağdaş Türkçenin Etimolojik Sözlüğü, İstanbul, 2007:

<sup>39</sup> Տե՛ս <http://www.nisanyansozluk.com/?k=t%C4%B1rpan>: Նույնն է նշում նաև Պ.Կերեսթեջյանը (տե՛ս B.Kerestedjian, Matériaux pour un dictionnaire étymologique de la langue torque..., Amsterdam, 1971, էջ 155): Ն.Սկրտչյանը գտնում է, որ բառը հունարենից թուրքերենին է անցել հայերենի միջոցով (տե՛ս Ն.Սկրտչյան, Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենում, էջ 206):

թարգմանվել է համապատասխանաբար *swifts*<sup>45</sup> «ջրածիծառներ», *mauerschwalben*<sup>46</sup> «քարածիծառ», *шурки*<sup>47</sup>, *шур* «ջրածիծառ» բառից<sup>48</sup>, իսկ ֆրանսերենում բառը համապատասխանեցվել է բնագրային տարբերակին՝ *drépanes*<sup>49</sup>: Փաստորեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն թարգմանություններում բառն իր կազմում չի պարունակում տվյալ լեզվում գործածվող գործիքանիշ (համապատասխանաբար *sickle* կամ *scythe*, *faucille* կամ *faux*, *sichel* կամ *sense*, *серп* կամ *коча*) բառաձևը, մինչդեռ հայերենում երկու դեպքում էլ առկա է *մանգաղ* գործիքանիշ բառը:

Պետք է նշել, որ հունարեն տարբերակն առաջին անգամ վկայել է Արիստոտելը իր «Կենդանիների կյանքը» գրքում<sup>50</sup>: Հետաքրքիր է, որ այդ գրքի անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն ժամանակակից թարգմանություններում տվյալ բառը ոչ թե թարգմանվել է, այլ համապատասխանեցվել է բնագրային տարբերակին (անգլերենում և ֆրանսերենում՝ *drepanis*, ռուսերենում՝ *дрепанида*)<sup>51</sup>, թեև XVIII դ. ֆրանսերեն մի թարգմանությունում

<sup>45</sup> St'ú **Basil**, *Letters and Selected Works* (Nicene and Post-Nicene Fathers, vol. 8, Second Series), Peabody, Mass., 1995, էջ 96:

<sup>46</sup> St'ú **Basilius der Große**, *Ausgewählte Schriften*, Band 2: *Ausgewählte Homilien und Pedigten: Homilien über das Hexaemeron* (=Bibliothek der Kirchenväter, 1. Reihe, Band 47), München, 1925, էջ 126 (474):

<sup>47</sup> St'ú *Творения иже во святых отца нашего Василия Великаго, Архиепископа Кесарии Каппадокийския*, ч. 1, Москва, 1891. – Беседы на Шестоднев, էջ 5–149. Беседа 8, О птицах.

<sup>48</sup> St'ú **М.Фасмер**, *Этимологический словарь русского языка*, пер. с немецкого и дополнения О.Н.Трубачева, т. 4, Москва, 1987, էջ 510:

<sup>49</sup> St'ú **Basile de Césarée**, *Homélie sur l'Hexaéméron, ou l'Ouvrage des six jours*. - *Homélie, discours et lettres choisis de S. Basile-le-Grand*, traduits par M. l'Abbé Auger, Lyon, 1827, էջ 492:

<sup>50</sup> St'ú **Aristotle**. *Historia Animalium: Text, Volume 1, Books 1–10* (D.M. Balme, prepared for publication by Allan Gotthelf), Cambridge, 2002 (=Cambridge Classical Texts and Commentaries, 38), էջ 57:

<sup>51</sup> St'ú **Aristotle**, *Historia Animalium*, in 3 vol., I, Books 1-3, with an English Translation by A.L.Peck (=The Loeb Classical Library, 437), Cambridge, Massachusetts, London, 1965, p. 13, *Aristotle's History of*

Սիվրիհիսարում բառը գործածվել է «պատառաքաղ» նշանակությամբ<sup>58</sup>:

Բառի ստուգաբանությունը չենք գտել:

### *Մըջըլֆա*

ՀԲԱ նյութերում բառանունը «եղան» նշանակությամբ գրանցվել է միայն Սասունի Ռաբատ գյուղի խոսվածքում:

ՀԲԱ նյութերում նույն և 15 այլ ենթախոսվածքներում բառը 13 հնչյունական տարբերակներով գրանցվել է «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ՝ ընդգրկելով Վանի (14՝ Դերըկ /մանջըլնֆ/, Հաղին /մարջիֆա/, Արմշատ /մըրջըլֆն/, Մարմետ և Պողանց /մըջուֆն/, Խալենց /մըրջիֆն/, Խարիդ /մուջուրֆա/, Ալյուր, Գոմս /մնջոնֆա/, Քոչանի /մնջոնֆն/, Կճավ /մնրջիֆա/, Պոռոնենց /մուրջուֆա/, Ծոկու /մ՛ուրջուֆա/, Տոսու, Հարպերտ /մնրջոնֆն/) և Տավուրիկ-Մոտկանի (1՝ Կրխու /մըջրաֆըա/) բարբառները:

Ա. Հանեյանը վկայել է մաջրաֆա բառի գործածությունը Տիգրանակերտի բարբառում<sup>59</sup>:

Բառի ստուգաբանությունը չենք գտել:

### *Մըրդէ*

ՀԲԱ նյութերում բառանունը «եղան» նշանակությամբ գրանցված է Եղեսիայի Կարմունջ գյուղի ենթախոսվածքում:

Բառի ստուգաբանությունը չենք գտել:

### *Մալմաստի*

ՀԲԱ նյութերում բառանունը «վեցմատնի եղան» նշանակությամբ արձանագրվել է Վանի Թիմար գավառակի Մարմետ և Պողանց գյուղերի ենթախոսվածքում:

<sup>58</sup> Տե՛ս Ն.Ա.Սկրտչյան, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, էջ 591:

<sup>59</sup> Տե՛ս Ա.Ն.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Երևան, 1978, էջ 20:

Այսպիսով, եղան գործիքը հայերենի բարբառներում ունեցել է ավելի քան 30 անվանում: Ըստ ՀԲԱ նյութերի՝ տարածքային լայն ընդգրկում ունեն *եղան* (214 խոսվածք և ենթախոսվածք), *քառէշտ* (106), *յաբա* (44), *վիլկա* (32), *երկումատնի* (30) բառանունները՝ իրենց հնչյունական տարբերակներով, տարածքային սահմանափակ ընդգրկում ունեն *ղրրգան* (23), *հոտլի* (17), *չորսմատնի* (16), *երեքմատնի* (15), *հաշա* (9), *շանա* (6) բառանունները՝ իրենց հնչյունական տարբերակներով, հազվադեպ հանդիպող բառանունների թվին են դասվում՝ *հինգմատնի* (3), *լամփառ* (3), *դողընդա* (3), *քիմէլի* (3), *անադոդ* (2), *չաթալ* (2), *ղրրմըղ* (2), *չանգանլ* (2), *ղրվանդանր* (1), *մանլէք* (1), *փէրօն* (1), *մըջըլէֆա* (1), *մըրդէ* (1), *սալմաստի* (1), *մօդմօդ* (1), *փըշըկալ* (1), *բանֆիզ* (*բաֆրիկ*) (1), *փ<sup>մ</sup>օծըխ* (1): Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ վկայված են՝ *երկիշտ* (3), *սէղընդա* (1), *խօդժօղվիչ* (1), *երկժանի* (1), *երեքժանի* (1):

Նշված բառերից 6-ը ունեն հ.-ե. արմատ/ներ (*եղան*, *երկումատնի*, *երեքմատնի*, *չորսմատնի*, *հինգմատնի*, *լամփառ*), 14-ը փոխառություն են այլ լեզուներից (պարսկ.՝ *շանա*, *բաֆրիկ*, *դողընդա*, *սէղընդա*, *հաշա*, *չանգանլ*, վրաց.՝ *փ<sup>մ</sup>օծըխ*, թուրք.՝ *ղրրգան*, *չաթալ*, *յաբա*, *անադոդ*, *ղրրմըղ*, ռուս.՝ *վիլկա*, քրդ. *մանլէք*), 3-ը ստուգաբանված չեն (*փէրոն*, *մըջըլէֆա*, *մըրդէ*), 11-ը հայակերտ են (*քառէշտ*, *երկիշտ*, *հոտլի*, *քիմէլի*, *մօդմօդ*, *ղրվանդանր*, *սալմաստի*, *փըշըկալ*, *երկժանի*, *երեքժանի*, *խօդժօղվիչ*):

Ըստ հետազոտության արդյունքների՝ «եղան» հասկացության բառային 34 տարբերակներից Խոյ-Մարաղայի բարբառում գործածվել են 12-ը (1-ը՝ միայն այդ բարբառում), Երևանի կամ Արարատյան բարբառում՝ 11-ը (1-ը՝ միայն այդ բարբառում), Մուշի բարբառում՝ 10-ը (1-ը՝ միայն այդ բարբառում), Վանի և պարսկահայոց բարբառներում՝ 8-ական, Կարինի, Սասունի և Ղարաբաղի բարբառներում՝ 7-ական, Խարբերդ-Երզնկայի և Տալվորիկ-Մոտկանի բարբառներում՝ 6-ական, Պոլսի միջբար-

пользовались наименования данного понятия (на основе списка будет составлена диалектологическая карта, представляющая ареальную характеристику этих наименований).

Исследование показало, что в материалах ДААЯ по количеству говоров и подговоров большой ареальный охват имеют слова *բահ* [bah] (376 говоров и подговоров), *մանգաղ* [mangał] (369), *գերանդի* [gērandi] (302), *բլլունգ* [k'əlung] (223), *եղան* [yełan] (214), *փոցխ* [p'ōc'x] (210), *արօր* [arōr] (161), *վեցկի* [vēc'ki] (145), *չութ* [č'ut'] (112), *փայտատ* [p'aytat] (107), *բւնտչւ* [k'arēšt] (106), *դարմաղ* [dərmał] (77), *բօխր* [t'ōxr] (71), *խազմա* [xazma] (67), *յաբա* [yaba] (44), *մանկէն* [mankēr] (43), *ճանկրիկ* [čankrik] (42), *գրաբլի* [grabli] (33), *վիլկա* [vilka] (32), *երկումանի* [yerkumatni] (30), *չին* [č'in] (30), ареально ограниченный охват имеют формы *կէն* [kēr] (29), *բի* [t'i] (27), *չօրօց* [č'ōrōc'] (25), *դարյազ* [daryaz] (25), *դարգան* [dərgan] (23), *ակրան // կակրան* [akran // kakran] (21), *ալաթ* [alat'] (20), *կիրկա* [kirka] (16), *հօսէլի* [hōsēli] (17), *չորմատնի* [č'orsmatni] (16), *երեքմատնի* [yerek'matni] (15), *բրաբան* [t'əbran] (15), գութան (со значением «рало» – 14, со значением «плуг» – 361/), *մանգզոն* [mangzōn] (12), *գարան* [c'ak'an] (11), *օրաղ* [ōrał] (10), *լապակա* [lapatka] (9), *խաչա* [hač'a] (9), *շանա* [šana] (6). Зафиксированные в материалах ДААЯ другие наименования относятся к числу реже встречающихся.

Так как в армянских диалектах есть множество слов, обозначающих земледельческие орудия, этимология или источник заимствования которых пока еще не выяснены, в работе сделана попытка выявить этимологию или источник заимствования определенной части слов. Результаты исследований этой области могут быть использованы в новых толковых и этимологических словарях. Однако среди этих слов 20 остаются неэтимологизированными, и исследования в этом направлении должны быть продолжены.

В ходе исследования было выяснено, что среди отмеченных 118 наименований индоевропейское происхождение имеют

18, заимствованны – 49, не этимологизированы или имеют сомнительную этимологию – 20, а 31 из них считаются образованными по закономерностям армянского словообразования (некоторые морфемы которых имеют и.-е. происхождение, некоторые – заимствованы, а какая-то часть – пока не этимологизирована).

Было отмечено, что и.-е. происхождение имеют 18 наименований [понятие «лопата» – 1 (*բի* [t'i]), «мотыга» – 2 (*փայտաւտ* [p'aytat], *բրկօւի* [ærkōsi]), «грабли» – 1 (*ցարաւն /ցազաւն/* [c'ak'an]), «рало» – 8 (*արօր* [arōr], *լուկ /լուժ/* [lusk], *չօրօց* [č'ōrōc'], *վեցկի* [vēc'ki], *կեր* [kēr], *սարվազ /սարմաւժ/* [sarvaz], *գօրծի/ն/* [gōrci/n/], *հօհեղից* [hōhērgič'']), «вилы» – 6 (*եղաւն* [yeʎan], *երկումատնի* [yerkumatni], *երեքւմատնի* [yerek'matni], *չորսւմատնի* [č'orsmatni], *հինգւմատնի* [hingmatni], *լամբար* [lamp'ar])]. Фактически, понятия «серп» и «коса» не имеют наименований и.-е. происхождения, наибольшее количество наименований и.-е. происхождения имеют понятия «арор» (8) и «вилы» (6). Из отмеченных 18 наименований 6 зафиксированы с древнего периода (*արօր* [arōr], *փայտաւտ* [p'aytat], *բի* [t'i], *երկումատնի* [yerkumatni] *երեքւմատնի* [yerek'matni] – V век, *սարվազ /սարմաւժ/* [sarvaz] – VII век), 3 из них – со среднего периода (*վեցկի* [vēc'ki] – XI век, *ցարաւն /ցազաւն/* [c'ak'an] – XIV век, *չօրօց* [č'ōrōc'] – XV век), остальные – с нового периода (в том числе *եղաւն* [yeʎan] – с XVII века).

Из 49 заимствованных слов 17 [3 имеют греческое, а 2 – персидское происхождение] заимствованы с турецкого (34,7 процента), 15 [1 – арабского происхождения] – с персидского (30,6 процента). 6 – с русского (12,2 процента), 3 [1 – индоевропейского происхождения] с грузинского (6,1 процента), 2 – с ассирийского (4,1 процента), 2 – с греческого (4,1 процента), 1 – с арабского (2,0 процента), 1 – с итальянского (2,0 процента) 1 – с курдского (2,0 процента), 1 – с азербайджанского (2,0 процента). Как видно из статистических данных, наибольшее число заимствований сделано с турецкого и персидского языков. 3 из заимствованных слов (*բահ* [bah], *մանգաղ* [mangaʎ], *մարկէղ* [markēʎ])

зафиксированы с древнего периода (V век), остальные – с нового периода (в том числе 3 – *նախախի* [naʃax], *բլուրնիգ* [k'əlung], *չին* [č'in] – с XVII века).

В работе представлены также производные формы рассматриваемых слов, словосочетания, которые использовались в армянских диалектах.

Как уже отмечалось, в монографии были рассмотрены только земельные наименования 7 понятий, т.е. за рамками исследования оказалось зафиксированное в армянских диалектах множество других наименований земельных понятий, исследование которых также очень важно с точки зрения целостности карт ДААЯ.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Վ.Ա.Աբրահամյան, Արիեստները Հայաստանում IV–XVIII դդ., Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1956. – 209 էջ:

Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Էջմիածին – Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանց, 1909. – 474 էջ:

Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար քարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 1983. – 551 էջ:

Ա. և Ս. Ազարեանց, Նոր բառգիրք յունարէն, իտալերէն, հայերէն, տաճկերէն, Վիեննա, տպ. Մխիթարյան, 1848. – 6+914 էջ:

Ս. Աթանասի Ալեքսանդրիոյ հայրապետի Ճառք (թուրք և ընդդիմասցութիւն), Վենետիկ–Ս.Ղազար, 1899. – 648 էջ:

Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեաց Հ. Ղևոնդ վ. Մ. Ալիշան, Վենետիկ–Ս.Ղազար, 1881. – 189 էջ:

Ուլմիա կամ Ձէյթուն, լեռնային արան ի Կիլիկիա, նկարագիր տեղական, կենսական, բանասիրական եւ լեզուաբանական, գրեց Յ.Յ.Ալլահվերտեան, Կ.Պոլիս, տպ. Գ.Պաղտատլեան, 1884. ~ 207 էջ:

Մ.Աղաբէկյան, Ա.Հանեյան, Ռ.Ուտուտյան, Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը. – Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), սր. 3, Երևան, «Նաիրի», 2010, էջ 5–22:

Է.Բ.Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974. – 167 էջ:

Է.Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1954. – 407 էջ:

Գ.Աղաջանյան, Ջ.Աստվածատրյան, Ս.Կարազյոզյան, Ընդհանուր երկրագործություն, Երևան, Գյուղհրատ, 1934. – 368 էջ:

Հ.Աճառեան, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ եւ թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ, համեմատութեամբ Վանի, Դարաբաղի եւ Նոր Նախիջևանի բարբառներուն (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ.), Մոսկուա-Վաղարշապատ, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1902. – 386 էջ:

Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Երևան, ԵՊՀ հրատ., հ. Ա, 1971. – 700 էջ, հ. Բ, 1973. – 688 էջ, հ. Գ, 1977. – 636 էջ. հ. Դ, 1979. – 676 էջ:

Հ.Աճառեան, Հայերեն գաւառական բառարան (ՀԳԲ) (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, Հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1913. – 1144 էջ:

Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, հ. Ա, ԵՊՀ հրատ., 1940. – 357 էջ, հ. Բ, Հայպետհրատ, 1951. – 609 էջ

Հ.Աճառեան, Քննութիւն Ագուլիսի բարբառի, Երևան, Պետհրատ, 1935. – 399 էջ:

Հ.Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1953. – 289 էջ:

Հ.Աճառյան, Քննություն Կիլիկիայի բարբառի, Երևան, ԵՊՀ հրատ., 2003. – 600 էջ:

Հ.Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1947. – 270 էջ:

Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, ԵՊՀ հրատ., 1952. – 300 էջ:

Հայոց բառ ու բան, աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Ս.Էջմիածնի, 1912. – 707 էջ:

Խ.Ամիրյան, Հայերենից փոխառյալ բառեր արդի թուրքերենում, Երևան, Արաս, 1996. – 95 էջ:

Ամիրտովաթ Ամասիացի, Օգոստ բժշկութեան, խմբագրությամբ Սո.Մալխասյանց, Երևան, ԱրմՖԱՆ, 1940. – 578 էջ:

Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց անպէտ կամ Բա-  
նարան բժշկական միւթոց, ի լոյս էած հանդերձ ծանօթագրու-  
թեամբք Կ.Յ.Բասմաջեան, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1926. –  
765 էջ:

Տ.Անդրեասյան, Սվեդիայի բարբառը /Քիսթինըզի լեզուն/  
Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967. – 392 էջ:

Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վա-  
ղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Ս.Էջմիածնի, 1896. – 711 էջ:

Բ.Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում  
IX–XIII դարերում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ. 1, 1958. – 376  
էջ, հ. 2, 1964. – 320 էջ:

Վ.Դ.Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատ-  
մության (V դար), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981. – 213 էջ:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Բ հրատ., Վենե-  
տիկ–Ս.Ղազար, 1865. – 849 էջ:

Գ.Ս.Ասատրյան, Արդյոք կա՞ն հայկական փոխառություն-  
ներ նոր պարսկերենում. – ՊԲՀ, 1990, 3, էջ 139–144:

Մ.Ե.Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Երևան, ԵՊՀ  
հրատ., 1962. – 256 էջ:

Ջ.Աստվածատրյան, Ս.Կարազոյզյան, Քամայյան Հ.,  
Երկրագործության հիմունքները, Երևան, Պետհրատ, 1932. –  
154 էջ:

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, ըստ  
ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն  
հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառն յաշխ. Հ.  
Յովհաննու Չօհրապեան վարդապետի, Վենետիկ–Ս.Ղազար,  
1805. – 836+30 էջ:

Ս.Ա.Ավագյան, Վիմական արձանագրությունների բառա-  
քննություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1978. – 359 էջ:

Ս.Ա.Ավագյան, Վիմագրական սրբագրումներ. – ՊԲՀ,  
1967, 2–3, էջ 277–286:

Ս.Մ.Ավագյան (Մերիմե), Արճակ. – Հայ ազգագրություն և  
բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, 8, Երևան,  
ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978. – 166 էջ:

Հ. Գաբրիել Անտիբեան, Հ. Խաչատուր Միրմելեան, Հ. Մկրտիչ Ազեբեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), Երևան, ԵՊՀ հրատ., հ. Ա, 1979. – 20+ 1141 էջ, հ. Բ, 1980. – 1067 էջ:

Գ.Բաղդասարյան, Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան, հ. Ա, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2008. – 426 էջ:

Ս.Հ.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973. – 355 էջ:

Ռ.Հ.Բաղրամյան, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, ա. հ., 1972. – 226 էջ:

Ռ.Հ.Բաղրամյան, Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960. – 177 էջ:

Ռ.Հ.Բաղրամյան, Կոզենի բարբառը, Երևան, ա. հ., 1951. – 258 էջ:

Ե.Բայբուրդյան, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում. – ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտ. Տեղեկագիր, գիրք I, Երևան, 1938, էջ 193–231:

Բառգիրք Արարատեան բարբառի, կազմեց Տ.Նաասարդեանց, Տիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանցի, 1903. – 132 էջ:

Արցախ, երկասիրեց Մակար եպս. Բարխուտարեանց, Բագու, «Արօր», 1895. – 460 էջ:

Մ.Վ.Բարխուդարեանց, Պըլլ-Պուղի, Թիֆլիս, տպ. Վարդանեան և ընկ., 1883. – 190 էջ:

Բարջանճ գիղ. Համայնապատում /1600–1937/, պատկերազարդուած, աշխատասիրեց Մ.Պ. Ծերօն Բարջանճցի, Պոսթոն, տպ. «Պայքար», 1938. – 280 էջ:

Ս.Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, աշխատասիրությանը Կ.Մուրադյանի, Ս.Էջմիածին, Մայր աթոռ Ս.Էջմիածնի հրատ., 2008. – 520 էջ:

Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցարեայ արարչութեան, աշխ. Կ.Մուրադյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984. – 378 էջ:

Կանոնք Բարսիլի Կեսարացոյ, Ե. – Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ.Հակոբյանի, հ. Ա, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1964. – 724 էջ:

Մեկնութիւն սրբոյ Աւետարանին՝ որ ըստ Մարկոսի, արարեալ երանելոյն Բարսիլի շնորհալի վարդապետի ճոն կոչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն, լուսատր մտօք և իմաստալի յորդորակօք, հ. 2, Կ.Պոլիս, տպ. Թերզեանց Ակնեցոյ, 1826. – 499 էջ:

Վ.Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972. – 510 էջ:

Բուլանըլիս կամ Հարք գաւառ, հաւաքեց Բենսէ, Թիֆլիս, տպ. Կ.Մարտիրոսեանցի, 1901. – 109 էջ:

Նորայր Ն. Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ–ԺԷ դարուց /հրատ. պատրաստեց Ա.Մինասեան/, Ժնեւ, Martiros Minassian, 2000. – 767 էջ:

Կ.Գաբրիէան, Բառգիրք Սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1952. – 682 էջ:

Մ.Ս.Գաբրիէլեան, Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1912. – 424 էջ:

Յ.Գազանճեան, Ետրկիոյ հայոց գաւառաբարբառը, մասն Ա եւ Բ, ձայնագիտութիւն, բառացուցակ, քերականութիւն, առածներ, ոճեր եւ ասացուածներ (=Ազգային մատենադարան ԼԴ), Վիեննա, տպ. Մխիթարեան, 1899. – 8+124 էջ:

Յ.Գազանճեան, Հայերէնէ փոխառեալ բառեր թրքերէնի մէջ. – Յուշարձան գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յոբելինի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811–1911) եւ 25-ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ» ոսումնաբերքի (1887–1911), Վիեննա, Մխիթարեան տպարան, 1911, էջ 325 – 330:

Գաբեգին Ա կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951. – 1255 էջ:

Գիրք Պիտոյից, աշխ. Գ.Մուրադյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1993. – 364 էջ:

Գիրք վաստակոց, քարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ–Ս.Ղազար, 1877. – 464 էջ:

Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ /խմբ.՝ Մ.Ջառաֆյան, Ա.Արարատյան/, Երևան, Պետհրատ, 1927. – 30 էջ:

Գրիգորի Սկեռացոյ Ներբողեան ի Սուրբն Ներսէս Լամբրոնացի. – Սովետրք հայկականք, հ. ԺԵ, Վենետիկ–Ս.Ղազար, 1854. – 90 էջ:

Սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Նարեկացոյն Մեկնութիւն Երգ երգոց Սողոմոնի, Պէլյութ, Հայ եկեղեցասիրաց եղբայրակցութեան հրատ., 1963. – 148 էջ:

Գրիգոր Նարեկացի, Մեկնություն Երգ երգոցի (թարգմ. գրաբարից՝ Վ.Ֆերեշեթյան), Ս.Էջմիածին, Մայր աթոռ Ս.Էջմիածնի հրատ., 2007. – 236 էջ:

Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն, Կ.Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացոյ, 1746. – 592 էջ:

Գիրք հարցմանց երիցս երանեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն, Կ.Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպօլսեցոյ, 1729. – 808 էջ:

Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալոյս վարդապետի, Կ.Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացոյ, 1741. – 740 էջ:

Ս.Ս.Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002. – 192 էջ:

Թ.Դանիելյան, Մալաթիայի բարբառը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967. – 253 էջ:

Լուծմունք Սահմանացն Դաթի Անյաղք փիլիսոփայի. – Գիրք սահմանաց Դաթի Անյաղք փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի, Կ.Պոլիս, ս. հ., 1731. – 344 էջ:

Կ.Ս.Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քայտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966. – 503 էջ:

Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք, կազմեց Հ.Ա.Օրբելի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966. – 136 էջ:

Գիվան հայ վիմագրության, պր. 3, Վայոց ձոր. Եղեգնա-  
ձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան,  
Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1967. – 428 էջ:

Գիվան հայ վիմագրության, պր. 4, Գեղարքունիք. Կամոյի,  
Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս.Գ.Բարխուդար-  
յան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973. – 526 էջ:

Գիվան հայ վիմագրության, պր. 6, Իջևանի շրջան, կազ-  
մեցին Ս.Ա.Ավագյան, Հռ.Մ.Ջանվիդադյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ  
հրատ., 1977. – 332 էջ:

Գիվան հայ վիմագրության, պր. 9, Լոռու մարզ, կազմեցին  
Ս.Գ.Բարխուդարյան, Կ.Գ.Ղաֆադարյան, Ս.Տ.Սաղումյան,  
Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012. – 612 էջ:

Եզնկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ  
աղանդոց, Վեներտիկ–Մ.Ղազար, 1826. – 334 էջ:

Սյրոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրու-  
թիւնք, ըստ ընտրելագոյն ընթերցուածոյ գրչագրաց, Վեներտիկ,  
ա. հ., 1859. – 384 էջ:

Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց, աշխատա-  
սիրութեամբ Տ. Մեսրոպ քահանայ Արամեանի, Երևան, «Գան-  
ձասար» աստուածաբանական կենտրոն, 1993. – 149 էջ:

Բառգիրք հայոց, արարեալ Երեմիայ վարդապետէ, Յալի-  
կօռնայ [Լիվոռնո], տպ. Սարգսի Ետրկիացոյ Սահեթճոյ, 1698.  
– 345 էջ:

Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծա-  
նոթագրությունները Հ.Մ.Ամալյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.,  
1975. – 445 էջ:

Գ.Ս.Երեանեան, Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյ-  
րոթ, Չարսանճագի հայր. միութեան կեդր. վարչութեան հրատ.,  
1956. – XX+700 էջ:

Գիրք որ կոչի Պարտավճար, արարեալ Տեառն Սիմէօնի  
վշտակօծ և ցառակիր Կաթուղիկոսի, մեծագործ և յոգներախտ  
Հայրապետի ամենայն Հայոց Երևանեցոյ, Մայր աթոռ Ս.Էջ-  
միածին, տպ. Ս.Գրիգոր Լուսատրչի, 1779. – 383 էջ:

Ջամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնալից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և տարադրեցեալ ի Միմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ, տպ. Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, 1873. – 304 էջ:

Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, Վեներտիկ–Ս.Ղազար, հ. 1, 1836. – 500 էջ, հ. 2, 1836. – 430 էջ:

Աւ. քահ. Եղգարեան, Իրանի Չհարմիալ գաւառը, Թեհրան, տպ. «Անի», 1963. – 192 էջ:

Մ.Ջաքարյան, Ագուլիսի բարբառի բառարան /ինքնության բացահայտում/, Երևան, «Իրավունք», 2008. – 352 էջ:

Ջէյթունցի (Մն.Սեմերճեան), Ջէյթունի անցեալէն ու ներկայէն, մասն Բ, Բարիզ, ա. հ., 1903. – 240 էջ:

Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ. Պ.Խաչատրյանի և Հ.Քյոսեյանի, Էջմիածին, Մայր աթոռ Ս.Էջմիածին, 2003. – 808 էջ:

Թանգարան Հայկական հին և նոր դպրութեանց, հ. Բ, Անկանոն գիրք Նոր կտակարանաց, Վեներտիկ–Ս.Ղազար, 1898. – 492 էջ:

Երանելոյն Թէոդորոսի միայնակեցի Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ. – Յովհաննու Իմաստասիրի Աւանեցոյ Մատենագրութիւնք, էջ 172–182:

Բ.Գ.Թողաքյան, Համշենահայերի ազգագրությունը. – Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, 13, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982. – 155 էջ:

Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, ի լոյս եւծ Բ.Պատկանեան, Ս.Պետերբուրգ, տպ. Ի.Ն.Սկօրոխօղով, 1887. – 344 էջ:

Թովմա Մեծովեցու Յիշատակարանը, հրատարակեց իւր յառաջաբանով Կ.Կոստանեանց, Թիֆլիզ, տպ. Յ.Մարտիրոսեանցի, 1892. – 87 էջ:

Հ.Թորոսյան, Ջրատիրությունն ու ջրի օգտագործման կարգն Արևելյան Հայաստանում /XVII դ./ – Լրաբեր հասարակական գիտությունների (ԼՀԳ), 1983, 3, էջ 57–63:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969. – 601 էջ:

Մ.Լիսիցյան, Ձանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969. – 334 էջ:

Ա.Ղ.Լուսենց, Արեշի բարբառը, Երևան, ԵՊՀ հրատ., 1982. – 270 էջ:

Գ.Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. Ա, Կ. Պոլիս, տպ. Յ.Մատթեոսեան, 1909. – 1060 էջ:

Լ.Խան-Աղեան, Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ, Տփլիս, Թիֆլիսի հայոց հրատ. ընկ., 1898. – 252 էջ:

Ա.Խաչատրյան, Ստուգաբանական դիտարկումներ. – Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պր. 3, Երևան, «Նաիրի», 2010, էջ 23–53:

Լ.Խաչիկեան, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մէջ եւ նրանց աղբիւրագիտական նշանակութիւնը. – Լ.Խաչիկեան, Աշխատութիւններ, հ. Բ, Երեւան, Գանձասար, 1999, էջ 315–335:

Մեկնութիւն ժամանակագրութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, Կ.Պոլիս, տպ. Երից որդոց Պօղոսի Արապեան Ապուշեխցոյ, 1840. – 252 էջ:

Ղ.Թ.Խոտրոյան, Ընդհանուր երկրագործություն, Երևան, Հայպետուսմանկհրատ, 1963. – 347 էջ:

Գ.Հ.Կարախանյան, Հայաստանի միջնադարյան կենցաղային քանդակները (XV–XVI դդ.), – ԼՀԳ, 1975, 8, էջ 31–47:

Գ.Կարախանյան, Հայոց ժողովրդական մշակույթը (հանրագիտարան երկու հատորով), հ. Ա, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003. – 324 էջ:

Վ.Կիզելեան, Պէյլանի բարբառը, Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2007. – 192 էջ:

Երանելոյն Կիրոյի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, տպ. Մխիթարեանց, 1832. – 433 էջ:

Կոմիտաս, Լոռվա գութաներգ. – Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 4. Խմբերգեր և սեններգեր, Երևան, Հայաստան, 1976, էջ 94–102:

Կոմիտաս, Լոռու գութաներգը Վարդաբլուր գիղի ոճով. – Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն: Նպաստ նը Կոմիտաս վարդապետի արբացման հարցին, աշխատ. Աբել վրդ. Օղլուգեանի, Մոնթրեալ, ա.հ. 1994, էջ 181–210:

Դ.Մ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979. – 189 էջ:

Հազար ու մի խաղ. ժողովրդական երգարան, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Երևան, ա. հ., 1969. – 136 էջ:

Ճառ երաներոյն Յակօբայ Մծբնայ եպիսկոպոսի ասացեալ յաղագս աստեղն և սոգուցն և մանկացն Բեթղեհէմի. – Գիրք և Ճառ հոգեշահ արարեալ յուղափառ և յաստուածաբան վարդապետաց, Կ.Պօլիս, տպ. Սարգիս Դպրի, 1722, էջ 66–125:

Վ.Գ.Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998. – 68 էջ:

Համշենահայ բանահյուսություն /հավաքեց, կազմեց և ծանոթագրեց Հ.Թ.Գուրունյանը/, Երևան, Լույս, 1991. – 336 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971. – 991 էջ:

Հայ շինականի աշխատանքի երգերը, կազմեց և խմբագրեց՝ Ա.Ղանալանյան, Երևան, Պետհրատ, 1937. – 265 էջ:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977. – 141 էջ:

Ս.Հայկունի, Տրապիզոնի հայ գիւղացու կեանքը. – Արարատ, 1905, յուլիս-օգոստոս, էջ 737–746, հոկտեմբեր, էջ 934–942:

Հայոց լեզվի բարբառային բառարան (գլխ. խմբագիր՝ Ա. Սարգսյան), Երևան, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., հ. Ա, 2001. – 451 էջ, հ. Բ, 2002. – 451 էջ, հ. Դ, 2007. – 451 էջ, հ. Ե, 2008. – 420 էջ:

Ա.Ն.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978. – 231 էջ:

Մ.Հանեյան, Հայերենի հնդեվրոպական բառապաշարի քեմատիկ-իմաստային մի քանի խմբերի տարածքային բնութագիրը (տնտեսական գործունեություն արտահայտող բառեր). – Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պր. 2, Երևան, 1996, էջ 145–227:

Ս.Բ.Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, ՀՍՍՌ- ԳԱ հրատ., 1965. – ԻԶ+ 389 էջ:

Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. բնագր. և ծանոթագր.՝ Ս.Մ.Կրկյաշարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986. – 651 էջ:

Հոմերոսի Ոդիսական, թարգմ. ի հեղինականէ Հ. Եղիա վ. Թումաճան, հ. Բ, Վեներտիկ–Ս.Ղազար, 1848. – 447 էջ: Հոմերոս, Ոդիսական, հունարեն բնագրից թարգմ.՝ Ս.Գրքաշարյան, Երևան, 1957. – 368 էջ: Հոմերոս, Ոդիսական, հին հունարենից թարգմ. Հ.Համբարձումյանը, Երևանի համալսարանի հրատ., 1988. – 416 էջ:

Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությանը՝ Էմ.Պիվազյանի, Երևան, ՀՍՍՌ- ԳԱ հրատ., 1960. – 298 էջ:

Յովհաննես Թլկուրանցի, Տաղագիրք, հրատ. Ն. եսյս. Ծովական, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1958. – ԻԸ+298 էջ:

Հովհաննես Իմաստասեր, Սեկնութիւն տումարիս հայկազնեայ. – Ա.Գ.Արքահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1956, էջ 222–236:

Լ.Շ.Հովհաննիսյան, Բառաքնական դիտարկումներ. – Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1989, 3, էջ 153–158:

Լ.Շ.Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարը (V դար), Երևան, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006. – 310 էջ:

Լ.Շ.Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի բնություն, մաս II, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012. – 184 էջ:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, տպ. օր. Ն.Աղանեանի, 1912. – ԺԹ+427 էջ:

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք կրկին [հ. Բ], Վենետիկ–Ս.Ղազար, 1826. – 736 էջ:

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Դառք, Վենետիկ–Ս.Ղազար, 1861. – 918 էջ:

Նորին Յովհաննու Ոսկեբերանի ի Մեծն Գրիգորիոս Լուսատրիչն Հայաստանեաց. – Սոփերք հայկականք, հ. Դ, Վենետիկ–Ս.Ղազար, 1853, էջ 87–125:

Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց և նահատակութեան Սրբոյն Գրիգորի Հայոց մեծաց հայրապետի ի Կոկիսոն հայոց մինչ յաքսորանս էր. – Սոփերք հայկականք, հ. Դ, էջ 3–85:

Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ–Ս.Ղազար, 1880. – 526 էջ:

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թոթոցն Պաղոսի, Վենետիկ–Ս.Ղազար, 1862, հ. 1. – 942 էջ, հ. 2. – 924 էջ:

Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին՝ որ ըստ Յօհաննու, Կ.Պօլիս, տպ. Գրիգոր դպրի Մարգուանեցոյ, 1717. – 982 էջ:

Հ.Հովսեփյան, Ղարաղաղի հայերը, հատոր 1, Ազգագրություն, Երևան, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009. – 501 էջ:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ.Տէր-Մկրտչեանի եւ Ստ.Մալխասեանի, Տիֆլիս, տպ. Մն.Մարտիրոսեանցի, 1904– ԺԶ+211 էջ:

Ռ.Ղազարյան, Գրաբարի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2000, հ. Ա. – 686 էջ, հ. Բ. – 658 էջ:

Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Սիջին հայերենի բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 1992. – 470 էջ:

Ա.Ս.Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1958. – 192 էջ:

Կ.Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1957. – 208 էջ:

Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս.Պետերբուրգ, Թիֆլիսի ընկ. հայերեն գրքերի հրատ., 1887. – 204 էջ:

Ք.Մ.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, /Ապարան-Արագածի տարածք/, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985. – 251 էջ:

Յ.Մալխասեան, Հայ գեղջուկի պլոնը. – Ազգագրական հանդես, գ. 3, 1889, 1, էջ 359–391:

Յ.Մալխասեան, Հայ գեղջուկի պլոնը, մաս Ա, Դաշտային գործիքներ, Թիֆլիս, Տպ. Մ.Գ.Ռօտինեանցի, 1898. – 36 էջ + 10 թ. նկ.:

Ս.Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, հ. Ա, 1944. – 608 էջ, հ. Բ, 1944. – 512 էջ, հ. Գ, 1944. – 614 էջ, հ. Դ, 1945. – 646 էջ:

Մանանայ, ժողովեաց և ի լոյս էած Գ.Վ.Սրուանձտեանց, Կ.Պոլիս, տպ. Ռ.Մ.Տնտեսեան, 1876. – 456 էջ:

Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., կազմեց՝ Վ.Ա.Հակոբյան, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., հ. 1, 1955. – 451 էջ, հ. 2, 1956. – 685 էջ:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1898. – 448 էջ:

Ալ.Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, ԵՊՀ հրատ., 1975. – 565 էջ:

Ռ.Ա.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Երևան, «Լույս», 1989. – 390 էջ:

Բ.Խ.Մեժունց, Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Երևան, ԵՊՀ հրատ., 1989. – 224 էջ:

Շ.Մինասյան, Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2007. – 128 էջ:

Գ.Հ.Միքայելյան, Նոր Բայազետ. – Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, 11, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980. – 167 էջ:

1	2	3	4
բըլունգ	Ծաղկավան, Աչաջուր	Իջևան	Տավուշ
	Շավարշավան /Կոթի/	Նոյեմբերյան	Տավուշ
	Նավուր, Վերին Կարմիրաղբյուր, Բերդ	Բերդ	Տավուշ
	Շամուտ	Թումանյան	Լոռի
	Կուրբան	Ստեփանավ.	Լոռի
	Շահնագար .	Տաշիր	Լոռի
	Շիրակամուտ	Սպիտակ	Լոռի
	Լճաշեն	Սևան	Գեղարքունիք
	Կարմիր	Գավառ	Գեղարքունիք
	Թագագյուղ	Մարտունի	Գեղարքունիք
	Վահան /Օրջոնիկիձե/, Հին Բաշքենդ /Արձվաշեն/, Վերին Ճամբարակ	Ճամբարակ	Գեղարքունիք
	Թուսկույու	Վարդենիս	Գեղարքունիք
	Աշտարակ, Բյուրական, Բյուրականի «Երևանի մայլա» բաղ, Կոշ, Մողդի, Օշական, Կարբի, Փարպի, Տեղեր, Օհանավան, Անտառուտ	Աշտարակ	Արագածոտն
	Լեռնապար	Արագած	Արագածոտն
	Քուշակ, Վարդենիս, Մելիքգյուղ, Հարրավան, Արագած, Արայի, Ափնա, Մուլքի, Ծաղկաշեն, Ապարան, Դալաչի, Արագած և Ուտմա	Ապարան	Արագածոտն
	Ադինջ, Ջառ, Ջրվեժ, Կապուտան, Կարնաղբյուր, Ջորաղբյուր, Ակունք, Գեղաշեն, Կամարիս, Բալահովիտ, Գառնի, Արամուտ, Էլար	Արվյան	Կոտայք
	Չովունի, Եղվարդ, Բույանդիս /ալժմ՝ Քասախ/ Երևան Ղոթր, Կենտրոն/, Քանաքեռ	Նաիրի	Կոտայք
	Երևան Ղոթր, Կենտրոն/, Քանաքեռ	Երևան	Երևան
	Ամբերդ և Դողս, Ծաղկունք և Շահումյան, Արարբեկյան, Հովտամեջ, Առատաշեն, Ծաղկալանջ, Աղավնատուն և Հայբաղ, Ներքին Խաթունարխ, Արագած	Էջմիածին	Արմավիր
	Նարբանդյան, Մարգարա	Արմավիր	Արմավիր
	Արարատ /Դավալու/, Չանախչի,	Արարատ	Արարատ
	Արտաշատ, Բուրաստան, Մասիս, Ազատավան, Գետագատ, Այնթապ, Արևշատ	Արտաշատ	Արարատ
	Խաչիկ, Աղավնածոր, Արենի, Քարագլուխ, Վերնաշեն, Եղեգիս, Ենգիջա և Բոլորաբերդ	Եղեգնածոր	Վայոց ձոր
	Վերիշեն և Բոուն, Տաքև և Սևարանց, Խնձորեսկ	Գորիս	Սյունիք
	Դափան /Կապան/,	Կապան	Սյունիք
	Կարճևան	Մեղրի	Սյունիք
	Մարաղա, Չափար և Ջարդախաչ, Ջազիկ, Հասանդայա-Մարալյան սարով, Գյունե Ճարտար /Ճարտար/, Տունի, Հին Թաղլար		ԼՂՀ
	Արմաշ	Իգմիք	Թուրքիա
	Օրդու, Չիբրուխու, Օրմոնքոյ, Ճենիկ	Տրապիզոն	Թուրքիա
	Ռողոսքո	Ռողոսքո	Թուրքիա
Եվրոնիկա, Թոխատ	Սեբաստիա	Թուրքիա	





[3500pp.]

ԳԱՄ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0306548

A 11  
99833

